

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԼՈՒՍՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Հ. ԴԱՎԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԽՄԱՆ ՄԱՍԻՆ  
VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

891.99(09)(077) 14248

7-23 | Դաշյան, Հ.  
Կոմ - գեղարվեստ-  
ակադեմիան Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՒՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

891.99.09(077)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԲՊԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1951 թ.


Դ-95

Հ. ԴԱՎԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

A II  
31341





Սովետական գալրոցում դասավանդվող յուրաքանչյուր գիտ-  
թիվալին ունի իր սրոշակի խնդիրներն ու նպատակները և իր նյու-  
թը՝ բովանդակովիչունը. այսինքն այն, ինչ տալին է նա մեր սո-  
վորողների մտավոր պաշարի Հարստացման, աշխարհայացքի  
մշակման և կամքի ու զգացմունքների դաստիարակության հա-  
մար:

Յուրաքանչյուր գիտակալին գալրոցում ձմեռու կողմից և որո-  
շակի իմաստով մշակում և ձեւավորենք մեր սովորողին, որպես  
նոր մարդու, որպես սովետական երկրի բազաքացու:

Գրականությունը, որպես գալրոցական ժառացման առարկա,  
նշանակալից տեղ է գրավում մյուս դիսցիլինների շարքում: Հայ  
գրականության դասավանդումը ևս իր պատվավոր տեղն ու դերն  
ունի գալրոցում դասավանդվող առարկաների մեջ:

Գրականությունը հասարակական իդեոլոգիա է: Հենց դրանով  
արդեն որոշվում է նրա նշանակությունը:

Գրականության դաստիարակչական գերը բազմապատիկ ան-  
դամ ուժեղանում է նրա սպեցիֆիկ առանձնահատկությունների  
շնորհիվ: Գեղարվեստական գրականությունը հասարակական ի-  
դեոլոգիայի մի յուրահատով տեսակն է, որի առանձնահատկու-  
թյունը «պատկերներով մուածելու» մեջ է կայանում: Գեղարվե-  
ստական գրականության կերպարները ձեւավորում են մարդկանց ոչ  
միայն միտքը, այլև ներգործում են նրանց ողջ պսիխիկայի վրա,  
որոշում նրանց կենսական քայլերը, արարտունքը:

Գեղարվեստական գրականության առանձնահատկությունը  
մյուս հումանիտար գիտությունների (պատմության, հոգեբանու-  
թյան, տրամարանության) համեմատությամբ՝ իրականության ճա-  
նաշման նրա մեթոդի մեջ է կայանում գրականության պատկերա-  
վորության և էմոցիոնալության մեջ է կայանում: Էմոցիոնալ ներ-  
գործման ուժով գալրոցում դասավանդվող և ուղ մի առարկա չի  
կարող մրցել գեղարվեստական գրականության հետ: Իսկ այն, ինչ

պատանուն Հաղորդվում է նրա էմոցիաների վրա ներգործելով՝  
ավելի խորը և ավելի տեսական ազդեցություն է ունենում նրա  
վրա:

Գրականությունը ամենից ավելի՝ քան ուսուցվող որևէ առար-  
կա դպրոցում՝ գիմում է սովորողների պատկերավոր՝ գեղարվե-  
տական մտածաղությանը, նրանց ստեղծագործական երևակայու-  
թյանը և զգացմունքներին։ Գեղարվեստական երկի ընթերցումն  
արդեն՝ ինքնին՝ ոչ միայն սովորողների, այլև սովորական ընթեր-  
ցողների մեջ երևակայության և մտքի շափականց ակտիվ աշխա-  
տանք է առաջ բերում։

Գրական-գեղարվեստական երկերի ներգործման ալիք առանձ-  
նահատկությունը իր աշակեցն է գտնում առանձնապես դրա-  
րոցականի տարիքային։ Հոգեբանության մեջ, այնքան, որ-  
քան երևակայությունն ու զգացմունքը, աբստրակտ մտածողու-  
թյան համեմատությամբ՝ զեղուահասի հոգեկան կյանքում ավելի՝  
մեծ տեսակարար կշիռ ունի, քան հասունացած մարդու մոտ։ Ե  
ընդհակառակը, պատանու, զեղուահասի մոտ ավելի քիչ է զարգա-  
ցած աբստրակցիայի ունակությունը։ Նրա մտածողությունը կոնկ-  
րետ է ու առարկայական։ Միաժամանակ, նա նկատելի կերպով  
հակոմ ունի գեղի պատկերներով մտածելու եղանակը։

Գեղարվեստական երկերի այդ առանձնահատկությունը հա-  
մաշնչուն է նաև «հեշտից գեղի դժվարը, պարզից դեպի բարդը»՝  
կոնկրետից դեպի վերացականը։ մանկավարժական սկզբունքին՝  
աշխարհի ճանաչումը դպրոցական տարիքի պատանու համար ա-  
վելի հեշտ ու հաճելի է գեղարվեստական դրականության երկերի  
միջոցով, քան՝ ասենք՝ պատմության, աշխարհագրության, ֆիզի-  
կայի և քիմիայի, փիլիսոփայության և այլնի միջոցով։

«Но съѣзжай с твоим позором!» — крикнул Гоголь Гоголю и  
и пытавшись убежать. «Насыщая идеи плотью и кровью, она  
дает им большую наглядность, большую убедительность,  
чем философия или наука».

Գորկին մատնանշում է նաև այն հանգամանքը, որ գրակա-  
նությունը, լինելով ավելի տարածված, ավելի պարզ ու հասարակ,  
դրանով հենց ավելի հարմար ու հզոր միջոց է պրոպագանդայի  
համար։

Մեծ է գրական երկերի հանաշողական նշանակությունը։

Գեղարվեստական երկի խորը ուսումնասիրությունը հարըս-

տացնում է դպրոցականի միտքը, նպաստում է նրա ձանաշղության գարգացմանը, լայնացնում է նրա շրջահայեցողությունը: Ճշգրիտ գեղարվեստական երկը սովորողի առաջ բաց է անում և նոր աշխարհները, իր հերոսների հետ միասին փոխադրում է սրբական այլ էսքիզաների, այլ ժողովուրդների, տարբեր հասարակությունների ու գասակարգերի կյանքի ոլորտը, բացահայտում է նրանց էությունը, ցույց է տալիս նրանց խեկական գեմքը:

Գեղարվեստական երկը մի «Հրաշագործ» բանալի է՝ մարդուն և մարդկային հարաբերությունների խիստ բազմազան աշխարհի դաները բաց անելու և այն հասկանալու համար:

Գրական երկերի ձանաշղողական նշանակությունը անքակտելիորեն կապված է նրանց դաստիարակչական ներգրծության հետ: Սովետական գլուխում գրականության դասավանդման խնդիրները որոշվում են սոցիալիստական շինարարության պահանջներով, սովետական երիտասարդության գաղափարական-քաղաքական գինվածության պահանջներով: Սովետական գլուխում գրականության դաստիարակումը պետք է հետապնդի ոչ միայն գրական գիտելիքներ հաղորդելու նպատակը, այլև գրականության միջոցով նա պետք է ապահովի մեր սովորողների կոմունիստական դաստիարակությունը:

Կրթությունն ու դաստիարակությունը իրարից անջատել չի կարելի:

Վաղուց դատապարտված է մեզ մոտ՝ XIX դարի մանկավարժ Ա. Ն. Օստրագորսկու «Պնդումն» այն մասին, թե՝ «կրթությունը նկատի ունի մտավոր ուժերը, իսկ դաստիարակությունը՝ մարդու համոզմունքներն ու բնավորությունը»: Ըստ այս հայացքի, կրթությունն ու դաստիարակությունը մանկավարժական պրոցեսի մեջ դիմում են որպես երկու տարբեր հոսանքներ, որոնք հոսում են կողք-կողքի և չեն միաձուլվում:

Ի. Վ. Ստացինը «Ենինիզմի հարցեր»-ում խիստ որոշակի է դնում կրթության և դաստիարակության միասնության հարցը: «Կրթությունը մի զենք է, որի էֆեկտը կախված է նրանից, թե ով է այն իր ձեռքում պահում»\*:

Այսաելից եղանակացություն. շի կարելի խոսել կրթության մասին՝ դպրոցի դաստիարակչական խնդիրներից կտրված, շի կարելի խոսել գիտելիքների, մտավոր ունակությունների մասին, նրանց

\* Ի. Վ. Ստացին, «Ենինիզմի հարցերը», ոռուերեն 10-րդ հրատ., էջ 610.

սոցիալ-գասակարգային, պարտիական ուղղվածությունից դուրս:

Սովետական դպրոցը, սովետական մանկավարժությունը՝ գրականության ուսուցչից պահանջում են ոչ թե պարզապես գրական գիտելիքների ուսուցում, որպես ինչ որ ինքնանպատակ բան, այլ դաստիարակող ուսուցում:

Ենելով Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի՝ բազմակողմանիորեն զարգացած, կոմոնիստական ոգով գաստիարակված մարդկիկ պատրաստելու պահանջից, գրականության ուսուցիչը պետք է պարզի իր համար, թե ի՞նչ պետք է արվի իր կողմից սովետական երկրի ապագա քաղաքացուն, գրականության պարապմունքների միջոցով։ Դա նվիրվածությունն է Սոցիալիստական Հայրենիքին, մեր մեծ ժողովուրդներին և նրա առաջնորդներին, պատրաստակամությունը՝ կյանքի գնով պաշտպանելու իր երկիրը, իր ժողովրդի ազատությունն ու անկախությունը. դա անձնականը ընդհանուրին ստորագրականությունը վեհ հատկությունն է, սկզբունքայնությունն ու հետեւզականությունը, ճշմարտացիությունն ու աղնվությունը. դա աշխատումակությունն է և ձեռներեցությունը, կամքի ուժն է և կարգապահությունը. դա գիտելիքների ամուս սիստեմն է և գիտական աշխարհայացքը. դա խորը, վառ հետաքրքրությունն է գեպի գիտությունն ու արվեստը, գեպի մարդկության ստեղծած կուլտուրական ժառանգությունը։

«Կոմոնիստ կարելի է դառնալ միայն այն ժամանակ, եթե քո հիշողությունը կհարստացնես այն բոլոր գանձերի գիտությամբ, որ մշակել է մարդկությունը», — ասել է Մեծ Լենինը\*:

Եթե գրականության ուսուցիչը անցնում է ծրագրով նախատեսնված այս կամ այն գեղարվեստական երկի վերլուծմանը, մանավանդ, դրական, հերոսական կերպարների բնութագրմանը, խորապես պետք է գիտակցի իր գերն ու անելիքը։ Ինքը դասաւուն առաջին հերթին պետք է զգա սովորողների մեջ հերոսականության, սովետական հայրենասիրության պատվաստման անհրաժեշտությունը։ Նա ինքը, բարձրացնելով հերոսական մեծ կերպարներին, մեծ հայրենասերներին, սովորողների մեջ պետք է առաջացնի համակրանք գեպի այդ վեհ կերպարները։ Նրա խոսքը պետք է լինի կրքոտ, ոգեշնչող, հերոսության կոչող։

\* «Ճամասատանի երիտասարդության կոմունիստական Միության Համառուսական Խամացումարում 1920 թ. հոկտեմբերի 2-ին։ Լենին, Ստալին, Բնափիր երկեր, հասոր II, էջ 1024. ՀԿ(Բ)Պ ԿԿ Պարտհրատ, 1937 թ.»

Առաջին հայացքեց կարող է թվալ, թե այս բոլորը կարելի է կատարել սովորական շրջանի գրականության երկերի միջոցով միայն: Բայց զա այդպես չէ: Միայն վուգար սոցիոլոգիզմի տեսաբանները մեր անցյալի կլաստիկների երկերը դիտում էին որպես սովորական դպրոցականի համար խորթ և վնասակար իդեոլոգիալի դրսերում և դրա համար դրանց ուսումնասիրման հիմնական ինպիրո՛ սովորողների մեջ ավատական ու բուգժուական արշվեստի և գրականության վարակող ներգործության դեմ իմունիտետ մշակելու մեջ էին տեսնում: Լավագույն դեպքում անցյալի դրականությունը նրանք գնահատում էին գեղարվեստական բարձր վարպետության համար միայն:

Մինչդեռ, մենք գիտենք, որ համաշխարհային գրականության լավագույն ներկայացուցիչները անցյալում՝ եղել են հասարակական մեծ գործիչներ, մեծ հայրենասերներ, արտահայտել են իրենց ժողովրդի ամենից առաջավոր ձգտումներն ու ակնկալությունները: Լոմոնոսովը, Պուշկինը, Բելինսկին, Տոլսոտը, Չերնիշևսկին, Արուվանը, Նալբանդյանը, Թումանյանը մեծ գրողներ են համարվել նրա համար, որ մեծ ծառայություն են ցուց տվել իրենց ժողովրդի առաջադիմության, նրա լուսավորության գործին: Չերնիշևսկին ասում էր. «Յուրաքանչյուր ուսւած մեծ մարդու պատմական նշանակությունը շափում է նրա ծառայություններով իր հայրենիքին»: Նույնը մենք կարող ենք ասել ամեն մի այլ ազգի պատկանող գործիչի, գրողի մասին:

Մեր ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ, մեր մեծ կլաստիկ գրողների երկերում արտաֆայտված են մեր ժողովրդի լավագույն մտքերն ու զգացմունքները, լավագույն ձրդումներն ու երազները: Նրանցում իրենց վառ արտահայտությունն են գտել մեր ժողովրդի՝ ստրկական ճնշման դեմ մղած պայքարի հերոսական դրագուները:

Կլասիկական գրականությունը՝ նրա մարքսիստական-լենինյան ճիշտ հասկացողությամբ և մեկնարարանությամբ՝ հզոր զենք է հանդիսանում կոմոնիստական դաստիարակության համար:

Բայց սովորողների մեջ կոմոնիստական աշխարհայեցողության և կոմոնիստական բարոյականության դաստիարակության համար ամենից ավելի հարուստ, ամենից ավելի առաջ նյութ տալիս են սովորական դարաշրջանի գրականությունը, սովորական գրողների արտադրած երկերը, որոնք մարմնավորում են իրենց մեջ այն ամեն լավագույնը, ինչ ստեղծել է մարդկությունը

իր կովտուրայի ու քաղաքակրթության զարգացման պատմության  
ընթացքում:

Գաղափարական-քաղաքական և բարոյական դաստիարակու-  
թյան որպիսի՝ Հզոր աղբյուր են Հանդիսանում պրոլետարական  
գրականության հիմնագիր Մ. Պորկու երկերը, Շոլոխովի, Մայա-  
կովսկու, Ն. Օստրովսկու, Ա. Տոլստոյի, Ալ. Ֆադեևի երկերը: Պա-  
տահական չէ, որ Պավել Կորչագինը մեր երիտասարդության հա-  
մար դրոշ է դարձել, պատահական չէ, որ Տանյայի կերպարը մեր  
պատանեկության ու երիտասարդների սրտում ու հոգում այնպիսի  
տեղ է նվաճել, որ Օլեք Կոշեռոյի, Ուլյանա Գրոմովայի և մյուս  
երիտասարդ գվարդիականների կերպարները սովորական աճող  
սերնդի համար մարդու իդեալ-նմուշի նշանակություն են ստացել:

Որպիսի՝ վիթխարի ուժ ունեն՝ Պավել Կորչագինի բառերը՝  
մարդու կյանքի, նրա արժեքի ու խմաստի մասին. «Մարդու համար  
ամենաթանկագին բանը դա կյանքն է: Նա տրվում է նրան մեկ  
անգամ միայն, և պետք է այն այնպիս ապրել, որպեսզի տանջալից  
ամոթ չզգաս աննպատակ անցկացրած տարիների համար, որպիս-  
զի ամոթը չայրի քեզ գծուած ու մանր անցյալիդ համար, և որպիս-  
զի մենուկիս կարողանաս ասել. «ողջ կյանքու և ողջ ուժերդ տրվի-  
ցին աշխարհում ամենագեղեցիկ բանի՝ մարդկության ազատո-  
գրության համար»:

Որպիսի՝ Հմայք ունի Ուլյանա Գրոմովայի ներդաշնակորեն  
զարգացած անձնավորությունը: Նրա կերպարի ձշմարիտ գելեց-  
կությունը մեր պատանիների ու երիտասարդների մեջ արթնաց-  
նում է լավագույն զգացմունքներ, նա հարկադրում է հնչելու  
նրանց հոգում այնպիսի լարեր միայն, որոնք համահնչուն են իր  
կերպարին, նա պարտավորեցնում է մեր դպրոցականներին՝ լինել  
նրա պես աղնիվ, նրա պես համարձակ, նրա նման հայրենասեր  
չերու:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկը ըստ ամենայնի վերլուծելու,  
նրա բուն բովանդակությունը հասկանալու համար գրականության  
ուսուցիչը նախ և առաջ պետք է սովորեցնի իր աշակերտներին  
«կարդալ» այդ երկերը: Երկի ամեն մի ընթերցանություն դեռևս  
իսկական ընթերցանություն չէ: Իսկական ընթերցանության կող-  
տուրա մշակելու համար գրականության ուսուցիչը շատ պետք է

աշխատի իր վրա, նույնը պետք է պարտադրի և սովորողներին:

Դեռևս 1868 թ. Վ. Ի. Վոլովովովը գրում էր, թե՝ «գրականության դասաւուն աշակերտներին սովորեցնում է կրկնակիրեն կարդալ (ընդգծումը մերն է:—Հ. Դ.), այսինքն սովորողների մեջ զարգացնում է երկի առանձին մասերի և նրա բոլոր մանրամասների մեջ թափանցելու սովորություն, երկում արծարծված մտքերի և զարգափառների կապն ու փոխարարերությունը պարզելու ընդունակություն և, այդպիսով, պարզ կերպով պատկերացնելու երկի ամենաբարդ բովանդակությունը:

Խիստ կարեօր է նաև երկի ընթերցման արտահայտչականությունը, երկի իմաստալից կտրների ընդգծումը և մտքում, և բարձրաձայն: Այդ բոլորը անձրաժեշտ է պատվաստել աշակերտի մեջ նաև այն բանի համար, որպեսզի երկի ուսումնասիրման ժամանակ նա իր ընթերցանությունից հաճուկք էլ զգա, որպեսզի սիրով կատարի նրա վերլուծման հետ կապված լուրջ և դժվարին աշխատանքը: Նա պետք է վարժվի տետրում նշելու այն ամենը, ինչ անքանում հասկանալի չէ իր համար, լինի դա առանձին բառերի վերաբերյալ, լինի անձնավորությունների բնութագրի վերաբերյալ և այլն:

Այդ ուղղությամբ զնահատելի աշխատանք է կատարում երեւանի Մ. Գորկու անվան իգական միջնակարգ դպրոցի հայոց լեզվի, և դրականության դասաւուն ընկ. Վարսիկ Եսայանը: Նրան Տ. 9-10-րդ դասարանների աշակերտները աշխատում են այդ ձևով: Նրանց հատուկ տեսքերը այդ մասին են խոսում: Այդ մասին է վկայություն նաև նրանց ուսուցչի և նրանց ընթերցանության տեխնիկան:

Այնուհետև, միջնակարգ դպրոցի ուսման դասընթացն ավարտող աշակերտները պետք է տիրապետեն գեղարվեստական երկի բաղկացուցիչ տարրերի՝ նրա զաղափարական բովանդակության, համարակական արժեքի, այտմեքի և կոմպոզիցիայի, բանաստեղծական արտահայտչական միջոցների և ոճի, նրա բանաստեղծական լեզվի և այլնի մասին դիտական տվյալներին:

Անհրաժեշտ է վճռական բեկում առաջացնել աշակերտների վերաբերմունքի մեջ դեպի գեղարվեստական երկի ընթերցումն ու մերլուծումը և աստիճանաբար հասնել այն բանին, որպեսզի նրանք ոչ թե պարապությունից որևէ երկ հենց այնպես ընթերցեն, այլ յուրաքանչյուր երկի ընթերցանություն նրանց մոտ նպատա-

գալին լինի, որպեսզի ընթերցած ամեն մի երկի մասին նրանք մտածեն, խորհեն:

Ընկ. Վ. Եսայանի 8-րդ դասարանում իմ լսած մի քանի գաւառի ընթացքում ևս համողվեցի, որ առանց այդպիսի ընթերցման կուլտուրա ունենալու, նրա աշակերտները չեն կարողանա այնպիսի հաջող վերլուծություն տալ Հոմերոսի «Էլիական»-ի և «Աղասիական»-ի, Յ. Ռուսթավելու «Վաղբենավոր»-ի և «Ասք Իօնի զորագնդի մասին» բարդ ու դժվարին երկի մասին։ Առանց այդպիսի ընթերցման, գրականության դասատուն ինքը կդժվարանա այդ երկերը վերլուծել այնպես, ինչպես անհրաժեշտ է։

\* \* \*

Միջնակարգ դպրոցի 8—10-րդ դասարաններում ուսումնասիրության է ենթարկվում հայ գրականության պատմությունը (ինչպես նաև այլ ժողովուրդների գրականության պատմությունը)։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է մի ակնարկ նետել այն հարցի վրա, թե գրականության պատմության ուսումնասիրման հարցում ինչպիսի՝ տարբեր տեսակների են գոյություն ունեցել անցյալում, ինչի՞ շուրջն է եղել նրանց պայքարը, և ներկայումս ինչպիսի տեսակետ գոյություն ունի։ Դա անհրաժեշտ է մեզ այն բանի համար, որպեսզի մենք հայ գրականության պատմության ուսումնասիրման և գրական առանձին երկերի վերլուծման ժամանակ ձիւտ կողմնորոշում ունենանք։

XIX դարի երկրորդ կեսում և XX դարի սկզբին գրականության ուսումնասիրության հարցում երկու հիմնական հոսանքներ էին պալքարում միմյանց զեմ։ Մեկը առաջին պլանն էր մղում գրականության, հետևապես և դպրոցական ծրագրով նախատեսված գրական առանձին երկերի գաղափարական բովանդակությունը, մյուսը՝ նրա գեղարվեստական ձևը, մեկը հետաքրքրվում էր բացառապես այն հարցով, թե ի՞նչ են արտացըլում և պատկերում գրողները, մյուսը՝ այն հարցով, թե ի՞նչպես են նբանք պատկերում։

Մեզ համար, գրական-գեղարվեստական երկի վերլուծման մեջ առաջարկոր գերը պատկանում է երկի գաղափարական բովանդակությանը։ Երկի կերպարների, կոմպոզիցիայի և լեզվական ու բանաստեղծական արտահայտչական այլ միջոցների մեջ մենք տեսնում ենք այդ բովանդակության բացահայտման դանագան եղանակներն ու միջոցները։

Անհրաժեշտ է հիշատակել, որ սովետական դպրոցի պատմության մեջ ևս եղել է մի կարճատև շրջան, երբ դասատոների մեջ հանդես են եկել գրական երեսվթների ֆորմալիստական ուսումնական կողմնակիցներ, երբ առաջին պլանի վրա քաշվել է գրողի գեղարվեստական վարպետության տեխնիկան։ Գրականության դպրոցական ուսուցման նպատակը այդ շրջանում սովորողների ֆորմալ-էսթետիկական դգացմունքների դարձացման և ամրապնդման մեջ էին տեսնում։

Ֆորմալիստներին հետաքրքրողը բացառապես դրական-գեղարվեստական երկերի էսթետիկական կողմն էր, գրական ձևի հարցերը։ Նրանք ենում էին երկի ձևի ուսումնասիրությանը առաջնություն տալու անհրաժեշտության տեսակետից։ Գրականության պատմության դպրոցական դասավանդման մեջ ֆորմալիզմի ամենից հետևողական քարոզիչը՝ Վ. Ֆիշերը գրականագետների համառուսաստանյան առաջին համագումարում (1916—17 թ. թ.) «Գրականության էսթետիկական դասավանդման մասին» իր զեկուցման մեջ պնդում էր, թե՝ երբ մենք ուսումնասիրում ենք գիտականին, փիլիսոփային, քաղաքագիտին, մեզ համար կարևոր է գիտենալ, թե ի՞նչ է նա ասել, իսկ երբ մենք ուսումնասիրում ենք գրողին, պոետին, մեզ համար կարևոր է գիտենալ, թե ի՞նչպես է նա ասել» (ընդգծությունները մերն են։— Հ. Դ.):

Այս տեսակետը ընդունելու գեպքում, ամենից բարձր արժեք պետք էր տալ, ուրեմն, դեկադենտների արտադրած երկերին, նկատի ունենալով նրանց սաեղծած բարձր ձևը, իսկ ի՞նչ անել, այդ գեպքում, նրանց երկերում արտահայտված ոեակցիոն գաղափարների, անկումային տրամադրությունների հետ։ Ֆորմալիստներին այդ հարցը չեր գրաղեցնում։ Նրանք գեղեցիկ ձևի երկրպագուներ էին և ոչ «բովանդակալից ձևի» կողմնակիցներ։

Մեզ համար ինչ-ը և ինչու-ն որպես առանձին, ամբողջական արժեքներ չեն հանդիս գալիս. մեր աշխում նրանք արժեքավորվում են այն ժամանակ, երբ հանդիս են գալիս իրենց գիտականությունների մեջ, մեզ համար ցանկալի՝ առաջադեմ և առաջավոր գաղափարները արտահայտելով նրանց արժանի՝ բարձր, կատարյալ ձևով։

Մենք պայքարում ենք ապողիտիկ, գաղափարազուրկ գրականության դեմ, մենք բարձր ենք գասում այնպիսի գրականությունը, որն աշխի է ընկնում բարձր գաղափարականությամբ և խիստ պարտիական է։ Գրա հետ միասին մենք կողմնակից ենք բարձրար-

վեստ երկերի արտադրության, մենք մեր գրողներին՝ Հատկապես բարձր ենք զնա՞ծառում այն ժամանակ, երբ նրանք մեր գարաշը շանին՝ սոցիալիզմի գարաշը շանին Հատուկ բարձր, վեհ գաղափարների դրսության Համար բարձր, գեղեցիկ ձևի իրենց որոնումների մեջ Համարձակ են և գրական արտահայտչական միջոցների նոր գյուղեր են անում:

Մենք չենք ժխտում, որ սովորական գրականության մեջ ձևը՝ նրա բարձր գաղափարականության հետ Համեմատած՝ գենու և մնում. չենք ժխտում նաև այն, որ անցյալի կլասիկ գրականության երկերին ևս, պատմական առումով, Հատկանշական է եղել խորը գաղափարականությունը. Մեր իդեալը Հանդիսանում են բարձր գաղափարականությամբ տոպորիած և բարձրարվեստ գրական երկերը:

Վուլգար սոցիոլոգիզմի ու ֆորմալիզմի դեմ մշած պայքարը ընթացքում, նախառևուցիոն շրջանի կուլտուրական ժառանգության մասին Վ. Ի. Լենինի ցուցումի հիման վրա տեղի ունեցավ կլասիկ գրողների արմատական վերագնահատումը. Անցյալի գրականությունը սկսեցին զնա՞ծառել ոչ միայն գեղարվեստական բարձր վարպետության Համար, այլև իդեալական Հարստության Համար:

Անցյալի գրական ժառանգության մասին լինինյան Հանձարել գրույթի հետ միասին, մեր գրականության ուսուցիչների Համար գեկավար Փորմուլա է դարձել պրոլետարական գրականության հիմնադիր Մ. Գորկու հետեւյալ խոսքերը. «Մեր գրականությունը միշտ ուժեղ է եղել սոցիալական երջանկության Հարցերի լուծման նկատմամբ ունեցած իր կրոռու մղումով, մարդկայնության իր քարոզով, ազատության պատվին ձոնած իր երգերով, ժողովրդի կյանքի նկատմամբ ունեցած իր խորը հետաքրքրությամբ»:

Զմոռանաք, որ այս խոսքերը գրել է մի գրող և գրականակետ, որի Համար գրականության պարտիականության Հարցը ամենահիմնական պահանջ էր Հանդիսանում:

Հայրենական Մեծ Պատերազմը Հատուկ ուժով մեզ Համոզեց, թե ի՞նչ վիթխարի նշանակություն ունի մեր օրերում գեղարվեստական գրականությունը, պարզորոշ կերպով առաջ քաշեց այն Հարցը, թե ինչպիսի դեր են խաղացել և խաղում են մեր անցյալի և ներկայի լավագույն, առաջավոր գրողների երկերը, որպես նրանց ազգային կուլտուրայի արտահայտիչներ, որպես նրանց ազգային ոգու անխորտակ հուշարձաններ:

Հայրենական պատերազմի ամենածանր ու ամենադաժան փորձությունների պահին հայ մարտիկները բարձրածայն ու հանգիստավորապես, ի լուր իրենց մարտական ընկերակիցների, արտասահման էին հայ նշանավոր բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի «Զինվորին» բանաստեղծությունը, հայ ուռուցիչոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի հայտնի «Ամենայն տեղ մահը մի է» տողերը։ Մեր բազմազգի Սովետական Բանակի հերոս մարտիկները երբեք՝ք, ո՞չ մի վայրկյան անգամ չէին մոռանում ուստ ուռուցիչոն-դեմոկրատ Զերնիշեսկու «Ի՞նչ անել» վեպի հերոս Ռախմատովի կերպարը, երբեք՝ք, ո՞չ մի վայրկյան անգամ իրենց մարդից չէին գցում ն. Օստրովսկու Պավել Կորչագինի՝ մարդկային կյանքի իմաստի և արժեքի մասին հայտնի խոսքերը։ Մ. Գորկու՝ այդ մեծ հումանիստի՝ մարդուն ուղղված սխրագործության կոչը միշտ հնչում էր Հայրենական Պատերազմի ճակատներում և ողենչում ու թևավորում սովետական մարտիկներին։

Այս բոլորը վկայում են զրականության պատմության ուսումնական սկզբան սկզբունքների՝ ֆորմալիզմի և վուզար սոցիոլոգիզմի լիակատար սնանկությունը։

Այս բոլորը մի անգամ ես ընդգծում են սովետական գրականության նոր, ավելի բարձր աստիճանի գաղափարականությունը և պարտավորեցնում են մեր սովետական գրողներին՝ ուժեղացնել պայքարը ավելի բարձրաբերվեստ երկերի համար։

Ծնկեր Ստալինը սովետական գրողներին մարդկային հոգու ճարտարապետներ է անվանել։ Մարդկային հոգու այդպիսի ճարտարապետ կառուցողներ կարող են դառնալ այնպիսի գրողներ, որոնք կիրագործեն այն մեծ խնդիրը, որը ձեսկերպված է «Սովետական գրողների միության կանոնադրության» մեջ՝ հետևյալ խոսքերով. «աշխատավոր մասսաների գաղափարական վերափոխումն ու գաստիրակումը սոցիալիզմի ոգով»։

Գրականության պատմության ուսումնասիրման հետ կապված վերոհիշյալ հարցի վրաց այսշափ երկար կանգ առանք նրա համար, որովհետեւ, ինչպես ասացինք, VII—X դաստիարականներում դասավանդվում է արդեն գրականության պատմությունը։ Գրականության դասաւուն պետք է զինված լինի ոչ միայն իր առարկայի գիտությամբ, այլև պետք է քաջ ծանոթ լինի այս հարցերին, գրական երկերի վերլուծման ժամանակ ճիշտ գիրքորշում ունենալու համար։

Գրականության պատմության ուսումնասիրության մեջ կարե-  
վոր դրույթներից մեկը, որը պետք է հետևողականորեն զարգաց-  
նել բովանդակության և ձեմի միասնության հարցն է:

Լենինը մեծ էր համարում արվեստի այն գործերը, որոնց մեջ  
գոյություն ունի ձեմի և բովանդակության ներդաշնակություն: Դրա  
համար էլ, երբ խոսում ենք երկի գեղարվեստական կողմի մասին,  
առաջին հերթին պետք է մեր ուշադրությունը ուղղենք այդ ինը դրի-  
վրա:

Ձեմի և բովանդակության միասնության սկզբունքը լուծում է  
նաև գրականության պատմության և գրականության տեսության  
փոխհարաբերության հարցը: Ամեն մի գրական երկ վերջուժելիս  
շոշափում են և տեսական կարգի հարցեր:

Բովանդակության և ձեմի միասնության սկզբունքը լուծում է  
նաև սովորողների գաղափարական-քաղաքական դաստիարակու-  
թյան և գեղարվեստական դաստիարակության փոխհարաբերու-  
թյան հարցը:

Երկի խորը հասկացումը շափից գուրս ուժեղացնում է էպի-  
տիկական զգացմունքը, և գեղարվեստական ըմբռնողության ուժը,  
փոխադարձարար, նպաստում է երկի հասկացմանը: Ինչքան խորն  
են հասկանում սովորողները երկի բովանդակությունը, այնքան  
խորն են զգում նրա գեղեցկությունը, և ինչքան գեղարվեստական  
է հնչում երկը, այնքան շատ է նպաստում այն ուշադիր ուսում-  
նասիրելուն և իր ամբողջ խորությամբ ու էությամբ հասկանալուն:

Ձեմի և բովանդակության ներդաշնակ համաձուլվածք են ներ-  
կայացնում կլասիկ գրողների բազմաթիվ երկերը, որոնցից իբր  
նմուշ կբերենք հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի «Վերք Հայա-  
տանի» վեպի «Հառաջաբան»-ի մի պատկերը, որը գծված է համե-  
մատության հիման վրա:

Ձեմի և բովանդակության միասնություն ստեղծելու գործում  
Աբովյանը այստեղ հանդիս է գալիս որպես տաղանդավոր վար-  
պետ: Նրա «Վերք Հայատանի»-ի հոչակավոր «Հառաջաբան»-ում  
ձեմն ու բովանդակությունը այնպես են իրար հետ կապված, որ  
նրանց իրարից անշատ պատկերացնելը բոլորովին անհնարին է:

Վերցնենք հենց օրինակ՝ գրաբարի և աշխարհաբարի պայքա-  
րի պատմությունը:

Պալքարի ելքը Աբովյանը գծագրում է մի պերճախոս պատկերով։ Պարսիկ զորականը սուր է բարձրացնում լիդիացոց Կրեսոս թագավորի վրա։ Կրեսոս թագավորի 20-ամյա միամոր որդու փայլ լեզուն (նա համբ էր) հանկարծակի բացվում է, և նա գոշում է։ «Անօրեն՝, էք ո՞ւ աս սպանում, չես տեսնում, որ առաջիդ Կրեսոս ար աշխարհի տերն ա»... «Զորականի ձեռքերը թուլացան... քսան տաքեկան լալ (մունջ) որդին իր հորը պրծացրեց»— ասում է Աբովյանը։

Ակադեմիկոս Ա. Տերտերյանն իր «Խաչատուք Աբովյան» մոնուքրաֆ աշխատության մեջ ասում է. «Աբովյանն այս սարսուազդիցիկ պատկերի մեջ միացրել է հայ ժողովրդի տրագեդիան իր անհատական տրագեդիայի հետ։ Ժողովրդի կուլտուրայի գույքը նակում էր մահը։ Նրան սպասում էր տրագիկ վախճան։ Կուլտուրան փախչում էր նրանից, և նա չէր կարողանում պահել այն, պահպանել, որովհետև մեռած լեզվի՝ գրաբարի միջոցով անհնարին էր գիտություն ձեռք բերել։ Այդ՝ ժողովրդի տաղանդավոր զավակի անհատական տրագեդիան այն էր, որ գրաբարը «Քխովիլ էր» նրա լեզուն, փակել նրա ստեղծագործական ակունքը։ Բոնության ու խավարի գեմ նա ձեռնոց է նետում։ Տեղի է ունենում կատաղի գոտիեմարտ։ Շոնդալից ընկնում են գրաբարի՝ կղերա-ֆեռդալական սխոլաստիկ գրականության ժանդուած կապանքները։ Խափանվում է՝ ինչպես հայ ժողովրդի կուլտուրական մահը, այնպես և նրա տաղանդավոր գրողի ստեղծագործական մահը։ Հաղթանակը մնում է աշխարհաբար լեզվին»։

Պոհաժիկական արտահայտչական միջոցներից մեկը՝ համեմատություն կոչված ընդհանրացնող հասկացողությունը այստեղ իր տեսակի մեջ կատարյալ է։

«Հառաջաբան»-ում գծված պատկերը և հայ ժողովրդի կուլտուրան ու գրականությունը փրկելու գործում հայ աշխարհիկ լեզվի կատարած դերը այնպես գեղեցիկ, այնպես ներդաշնակ են համադրվում, որ, իրոք, այս միացյալ կերտվածքի մեջ անհնարին է ձեզ բովանդակությունից անշատել (սրանով մենք բնավ չենք ուզում ասել, թե Աբովյանի երկը ամբողջությամբ վերցրած ձեւի տեսակետից այդպես կատարյալ է)։

Աբովյանի «Վերք Հայաստան»-ին պատմական հերոսական վեպ է։ Աբովյանը կարողացել է ընտրել իր երկի ժամանակակից պատմական պատմելածե։ Դա էպիկական պատմելածե է, սակայն ոչ անտարբեր, սառը էպիզմը։ Ակադեմիկոս Ա. Տեր-

տերյանը ճիշտ է դիմել, որ «Վերք Հայաստանի»-ի պատմելաձերը էպիկական վեհության հետ միասին փայլում է և լիրիկական երաժշտական տոներով»: Լիրիզմը, երաժշտականությունը անհրաժեշտ էին երկի բովանդակության հերոիկան արտահայտելու համար:

Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն իր գաղափարական բովանդակությամբ խորը ժողովրդական է: «Վերք Հայաստանի»-ի պատմելաձեր ժողովրդական վեպի որթմիկ արձակն է հիշեցնում: Վերցնենք հենց Աղասու կնոջ նամակը. «Աղասի շան, Աղասի... յարաբ երեսդ մի երկնքին չես գցում, որ տեսնես, թե ի՞նչ մըրած ամպեր են առաջիդ կանգնած, ի՞նչ կրակ է վերեիցը վեր թափում. չե՞ս իմանում միթե՝ ա՛նիրավ, անշիզյար՝ թե էս կրակը ու էս բոցը, էս ծուփն ու էս ամպը ի՛մ բերնիցն են զուս զալիս, ի՛մ սիրտս է քուզա-քուզա իրանից հանում, վերեն աստղերը խավարացնում, բռնում, ներքեւ նար ու ձոր պատպանձացնում, անձող շինում»\*:

Այդ ամենը զալիս են ասելու, որ, իրոք, Աբովյանի մոտ բովանդակության ու ձեկի միասնության խնդրում ակնառու հաջողություններ կան:

\* \* \*

Գրականության պատմության ուսումնասիրությանը զուգահեռ, սովորողների գիտակցության մեջ մենք մտցնում և ամրացնում ենք գրականության պատմության համար առանձնահատուկ ընդհանրացնող հասկացողությունների և տերմինների մի ամբողջ շարք, ինչպես օրինակ, գրական ուղղարյուն, գրական ոն, գրական ժանր, կոմպոզիցիա, սյուժե և այլն, և այլն: Ուսումնասիրներով գրական երկը, մենք ձգուում ենք հասկանալ այն որպես մի օրգանական ամբողջություն, գիտել երկը որպես նրա բոլոր կողմերի՝ գաղափարական-թեմատիկ, կոմպոզիցիոն և լեզվական ու մական միասնություն:

Այս բոլորը պահտավորեցնում են մեզ՝ 8—10-րդ դասարաններում սիստեմի բերել տեսական այս բոլոր գիտելիքները, տալ սիստեմատիկ գիտելիքներ նաև գրականության տեսությունից:

Ի՞նչ է և ի՞նչպիսի տեղ է գրավում գրականության տեսությունը դպրոցում ենրիկայիս՝ մեր հասկացողությամբ:

Այս հարցը պարզաբանելուց առաջ անհրաժեշտ է դիմել այդ

\* Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Պատհբառ, Երևան, 1939 թ., էջ 174:

դիտության դասավանդման պատմությանը միջնակարգ դպրոցում:

Գրականության տեսությունը միջնակարգ դպրոցում դասավանդման առարքի է եղել շատ ավելի վաղ, քան գրականության ընթերցանությունը և գրականության պատմությունը: Այն ժամանակ, երբ գրական երկերը դպրոցում դեռևս չէին կարդացվում և ուսումնառությունը, դպրոցների ուսումնական պլանում կար «բանահյուսություն» («словесность») առարկան, կասիկական հնագույն ժամանակներից և միջնադարից եկող հոետորության և բանաստեղծության ուսուցման ձևով:

Գրականության տեսության դասավանդումը մինչընկողուցիոն դպրոցում ունեցել է բազմաթիվ էտապներ: Վերջին էտապը կապված էր գրականագիտության մեջ Գորմալիզմի զարգացման հետ: Այս էտապը ընդգրկում է և սովետական դպրոցը, նրա առաջին տարիներին:

Հորմալիստական պոետիկան արհամարժում էր արվեստի՝ իրականության հետ ունեցած կապի հարցը, երկի հասարակական արժեքի հարցը և միանգամայն սխալ կերպով պնդում էր երկի ձեփի պրիմատի օգտին՝ նրա բովանդակության նկատմամբ: Այս թե ինչու մինչընկետական դպրոցում զրականության տեսության վրա նայում էին որպես ինքնուրույն կուրսի վրա և այդ կուրսը անցնում էին կամ գրականության պատմությունից առաջ, որպես տարրական պրոպեդեվատիկա (ներածություն, նախագիտելիք գրականության պատմությունից), կամ վերջին դասարանում (գիմնազիաներում՝ 8-րդ դասարանում), որպես գլուխականների գրական կըրպությունը ավարտող, բոլորող առարկա:

Սակայն, XX դարի սկզբում առաջ քաշվեց մի նոր տեսակիտ, ըստ որի ավելի ճիշտ և ավելի տեղին էր համարվում տեսական ընդհանրացումները զրականության պատմության ուսումնասիրման պրոցեսում առանձին երկերի վերլուծությանը զուգահեռ կատարելը, և ըստ որի գրականության տեսությունը, որպես հատուկ, ինքնուրույն կուրս, տեղ շահետք է ունենար դպրոցում:

Գրականության տեսությունը գրականության պատմությանը դուգահեռ ուսումնասիրելու այս սկզբունքն ամբողջությամբ ընդունվեց սովետական դպրոցի կողմից, որը և արտացոլվեց արդեն 1921 թվի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի առաջին ծրագրերում:

Ինչպես հայտնի է, ներկայումս մեզանում գրականության տեսությունից զիտելիքները հաղորդում են դեռևս 5—7-րդ դասա-

II  
A 31341

44248

բանների գրական ընթերցանության հետ կապված: Խսկ 8—10-րդ դասարաններում դրանք ավելի խորացվում և լրացվում են:

Գրականության տեսությունը գրականության պատմության՝ որպես գիտության՝ մյուս երեսն է: Գրականության պատմությունն ընդհանրապես, և գրական երկը մասնավորապես, չի կարելի հասկանալ, վերլուծել՝ առանց գրականության տեսության, առանց պարզ, գիտականորեն ճշտված, սիստեմատիզացիայի հնիթարկված գրական գիտելիքների: Գրականության տեսության ընդհանրացումների օգնությամբ միայն գրական-պատմական երևոյթները դառնում են գիտակցական. առանց այդ ընդհանրացումների գրականության գիտական դասավանդումն անհնարին է. առանց նրանց կիրառման գրական երկի վերլուծումը վեր է ածվելու ինքնահոսու:

Դժբախտաբար, մեր գրականության ոչ բոլոր դասատուներն են հաշվի առնում այս բանը: Եվ անձ, գրական երկերը վերլուծելիս, առանց որոշ հետեւղականության, առանց սիստեմի և նախապես ծրագրած լինելու այդ, նրանք օգտվում են այնպիսի ընդհանրացնող հասկացողություններից, ինչպես օրինակ, երկի գաղափարական պրոբլեմ, գրական ժանր, գրական ուղղություններ, երկի սյուժե, ալեգորիա, սիմվոլ, ոտանակիր, երաշափերի և այլ հասկացողությունները, բատ որում, երկը վերլուծելիս, ոմանք սկսում են նրա սյուժեից, ոմանք՝ գաղափարական բովանդակությունից, ոմանք՝ նույնիսկ գրական այն ուղղությունից, որը գործադրել է հեղինակը տվյալ երկը գրելիս և այլն:

Սրանք այն գենքերն են, որոնց օգնությամբ միայն կարելի է ձեռք բերել ուսումնասիրության ենթակա գրական երկերի լիակատար և խորը հասկացումը: Սակայն այդ գենքերը պետք է գործադրել տեղին ու ժամանակին: Ի՞նչ պիտի ասի դասատուն գրողի մասին, ի՞նչպես պետք է վերլուծի նրա ստեղծած երկը, առանց այս գենքերից օգտվելու: Խաշատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն անցնելիս, օրինակ, նա պետք է խոսիր միայն եղակի փաստերի մասին, այսպես, օրինակ, նա պետք է ասեր, որ Աբովյանը ծնվել է Քանաքեռում, 1804 թվին, որ 1829 թ. Դորպատի համալսարանի պրոֆեսոր Փարբուր եկել է Հայաստան՝ Արարատի գտնաթը ուսումնասիրելու համար, որ Աբովյանը ուսանել է Դորպատում, որ նա գրել է մի վեպ, անունը գրել է «Վերք Հայաստանի», որ նա հայրենասիրական գաղափարներ է արտահայտել, որ հա-

լածվել է և անհայտ կորել 1848 թվի ապրիլի 2-ին, որ անմեռ է նրա երկը և այլն, և այլն:

Գրականության տեսության դասավանդման հարցերի լուծման մեջ մեր դպրոցի բարձր դասարաններում յուրաքանչյուր դասաւու թողնված է խնդն իրեն, ամեն մեկը իր խնդիրը հասկանում է լուրովի:

Նման պայմաններում հատուկ նշանակություն է ստանում փորձի փոխանակումը:

Սովետական դպրոցի փորձը մեզ ասում է, որ գրականության տեսությունը որպես առանձին գիտություն, որպես առանձին դասրնթաց, գրականության պատմությունից անջատ՝ վր կարող տեղ ունենալ մեր ծրագրերում: 8—10-րդ դասարաններում գրականության տեսությունից գիտելիքները մեր սովորողներին պետք է հաղորդվեն գրականության պատմության դասավանդման ընթացքում, գրական երկերի ուսումնասիրման գուգընթաց: Գրականության տեսական հասկացողությունները սովորողների կողմից պետք է յուրացվեն գրական-գեղարվեստական երկերի վերլուծության և արժեքավորման պրոցեսի հետ միասին, այն երկերի, որոնք պաված են գրականության պատմության ծրագրում: Տեսական յուրաքանչյուր հասկացողություն սովորողների գիտակցության մեջ պետք է մտցնել միայն պրակտիկ նպատակով, այսինքն, երբ տվյալ երկը վերլուծելիս տեսական այդ հասկացողության անհրաժեշտությունն զգացվում է:

Այսպիսով, գրական տեսության հասկացողությունները պետք է ունենան զուածական նշանակություն, պետք է լինեն՝ որպես ուսումնասիրվելիք երկերի վերլուծման և բնութագրման միջոց, առանց ինքնուզուն, թեորետիկական նշանակություն ունենալու, ըստ որում, սովորողները կարող են զիմի լրնկնել անգամ, որ այդ երկերի վերլուծման ընթացքում ոչ միայն գրականության պատմությունից են գիտելիքներ ձեռք բերում իրենք, այլև գրականության տեսությունից:

Դրա փոխարեն, ինքը՝ ուսուցիչը՝ պարտավոր է այս բոլորը հիմնալի կերպով իմանալ: Նա պետք է լավ իմանա գրականության տեսությունը, զոնե նրա համառոտ դասընթացի սահմաններում, պետք է կարողանա դասի ընթացքում հմտորեն կիրառել գրականության տեսության բոլոր ընդհանրացնող հասկացողությունները, խմբավորել դրանք, զուգադրել գրականության փաստերը և անել ընդհանրացնող եղբակացություններ: Նույնը նա

պետք է վարժեցնի կատարել և իր սաներին: «Այն, ինչ անսպասի-  
մի ու անսիստեմ է երեխաների համար, ուսուցչի համար պետք է  
լինի հաշված ու չափված, սիստեմավորված», — ասում է զրակա-  
նության տեսաբան Գ. Ն. Պոսպելովը, իր „Теория литературы в  
школе и изучении“ հոդվածում, որը գետեղված է „Литера-  
тура в школе“ ժուռնալի 1940 թ. № 6-ում (էջ 27—31), վիճա-  
բանությունների կարգով:

Գրականության տեսությունից արվելիք գիտելիքների ծավալը  
որպիսին անհրաժեշտ է յուրացնել տալ միջնակարգ դպրոցն ա-  
վարտողներին, պետք է լինի այնպիսին, որ մեր շրջանավարտները  
գրականությունը ըմբռնեն արդեն՝ որպես հասարակական իդեոլո-  
գիա, այսինքն ըմբռնեն, որ գեղարվեստական գրականությունը  
իրականության էական երևույթների արտացոլումն է մարդկային  
գիտակցության մեջ, ըմբռնեն, որ գեղարվեստական գրականու-  
թյունը, լինելով հասարակական իդեոլոգիաներից մեկը, իր հեր-  
թին ներգործում է հասարակական կյանքի վրա, որ գեղարվեստա-  
կան գրականությունը արվեստի կարևոր ճյուղերից մեկն է, որ  
նրանում պետք է լինի ձեռի և բովանդակության միասնություն, որ  
կարողանան բացահայտել երկի կոմպոզիցիան, պոետիկական լի-  
գումն, կարողանան իրարից տարրերել և ընութագրել պոետիկական  
տեսակները (էպոս, լիրիկա, դրամա) և պոետիկական ժանրերը.  
ընութագրել գրական ուղղությունները, ձանաշել գրողի ոճը և այլն:

\* \* \*

Գրականության դասատումն պետք է լավ իմանա և յուրացնել  
տա իր սաներին, որ գրականությունն ընդհանրապես, և գրական  
երկը մասնավորապես, պատմական կարգի երևույթ է, ընդհանուր  
պատմական պրոցեսի մի մասը:

Այս թե ինչու խստորիզմը պետք է դառնա գրականության  
դասավանդման օրենքը:

Գիտականորեն հասկանալ գրական երկը, զա նշանակում է  
հասկանալ այն պատմականորեն, որպես տեղի և ժամանակի հետ  
պայմանավորված երևույթ: Պատմականորեն հասկանալ երկը,  
նշանակում է ըմբռնել և ընդունել այն որպես որոշակի էպոփա-  
ցում և որոշ ժողովրդի մոտ հանդես եկած երևույթ, միաժամանակ՝  
որպես հասարակական զարգացման պրոցեսի վրա այս կամ այն  
ուղղությամբ, այս կամ այն չափով ներգործող կենդանի ուժ:

«Ամեն ինչ կախված է պայմաններից, տեղից և ժամանակից: Հասկանալի է՝ որ առանց պատմական մոտեցման հասարակական երևություններին՝ անհնարին է պատմության վերաբերյալ գիտության գոյությունն ու զարգացումը, որովհետեւ միայն այդպիսի մոտեցումն է պատմագիտությունը փրկում պատահականությունների բառի և ամենաանհեթեթ սխալների կուտի վերածվելուց»,— կարդամ ենք «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց»-ի մեջ\*:

Դրական երկի մեկնաբանման մեջ սովորողների մոտ իստորիզմը պետք է զարգացնել աստիճանաբար, քայլ առ քայլ, հաշվի առնելով նրանց ընդհանուր զարգացման աստիճանը և պատմությունից նրանց ունեցած գիտելիքների շափը:

Իստորիզմի տեսակետից նայելով, գրական երկի արժեքը պետք է շափվի այն բանով, թե գրողը ո՞րքան է լսել պատմության ձայնին, որքա՞ն ուժեղ է եղել նրանում պատմության զգացումը:

Մեր ասածները կոնկրետացնելու համար կրկին անդրագառնանք են. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպին: Արովյանն այս գժվարին պրոբլեմը լուծել է փայլուն կերպով. նրա մեջ անսահման ուժեղ էր պատմության զգացումը: «Եկանջը զնելով մայր Հողին՝ ժողովրդի սրտի զարկերին, նա լսել է պատմության ձայնին և տվել նրան համահնչուն երկասիրություն»,— ասում է ակ. Ա. Տերտերյանը, իր «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ:

Եվ իրոք, «Վերք Հայաստանի»-ի հենց «Հառաջաբան»-ում Արովյանի առաջ քաշած հարցերը՝ նոր, աշխարհիկ գրականության, աշխարհաբար լեզվի տիրապետության հաստատման, պարսկաց բռնակալության լծից հայ ժողովրդի ազատագրման և համեմատաբար լուսավոր Ծովախայի տիրապետության ընդունման հարցերը ժամանակի, պատմության հրամայական պահանջն էին հանդիսանում: Այդ երկը իր առաջ քաշած ակտուալ հարցերով միաժամանակ հայ հասարակական զարգացման պրոցեսի վրա ներգործող կենդանի ուժ գարձավ: Ծովական տիրապետության հաստատումը Հայաստանում՝ այն ժամանակ և այն պայմաններում՝ մեծ խթան գարձավ հայերի ոչ միայն տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման, այլև կուտուրայի,

\* «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց», Հայպետհրատ, Երևան, 1946 թ., էջ 149:

Հայ նոր՝ աշխարհիկ գրականության և աշխարհաբար լեզվի պարգացման համար:

Այն մասին, թե ինչպես նոր, առաջավոր գաղափարներն ու թեորիաները, լինելով հասարակական զարգացման արդյունք, իրենք իրենց հերթին ազդում են հասարակական կյանքի զարգացման վրա, «Պարտիացի պատմության համառոտ դասընթաց»-ում այսպիս է ասված. «Ինչ վերաբերում է հասարակական իդեաների, թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների նշանակությանը, ինչ վերաբերում է նրանց դերին պատմության մեջ, ապա պատմական մատերիալիզմը ո՛չ միայն չի բացառում, այլ, ընդհակառակը, ընդգծում է նրանց լուրջ դերն ու նշանակությունը հասարակության կյանքում, հասարակության պատմության մեջ»:

Լինում են հասարակական տարբեր իդեաներ ու թեորիաներ: Կան իդեաներ ու թեորիաներ, որոնք իրենց գարն անցել են և ծառայում են հասարակության մահացող ուժերի շահերին: Նրանց նշանակությունն այն է, որ նրանք արգելակում են հասարակության զարգացումը, նրա առաջխաղացումը: Լինում են նոր իդեաներ ու թեորիաներ, որոնք ծառայում են հասարակության առաջավոր ուժերի շահերին: Դրանց նշանակությունն այն է, որ դրանք հեղտացնում են հասարակության զարգացումը, նրա առաջխաղացումը, ըստ որում գրանք այնքան ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում, որքան ավելի ճշգրիտ են արտացոլում հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջները»:

Աբովյանի առաջադրած նոր գաղափարները՝ Հայ նոր գրականության և աշխարհաբար լեզվի տիրապետության հաստատման նրա պահանջը՝ միանդամայն համահնչում էին Հայ ժողովրդի առաջավոր հատվածի, իրեն՝ աշխատավոր ժողովրդի շահերին և պահանջներին: Դրա համար էլ նրանք հաղթանակեցին: Աբովյանի արտահայտած նոր գաղափարների հաղթանակի հիմքը նրանց պրոգրեսիվության մեջ էր: Պայքարելով գրաբար լեզվի դեմ, նաև միաժամանակ՝ պայքար էր մղում կղերա-ֆեոդական կարգի դեմ, իր քննադատական ուսալիզմի օգնությամբ մերկացնում էր այդ հասարակարգի էությունը և օգնում նրա թուլացմանը:

Այսպիսով, Աբովյանն ընթացավ Հայ ժողովրդի պատմության

\* «Համեկ(թ)Պ պատմության համառոտ դասընթաց», Հայպետհրատ, Երևան, 1946 թ., էջ 158—159:

ովյալ էպոխայի ամենից պրոգրեսիվ հասարակական ձգտությունների տվյալը և Հենց դրանով ընդառաջ գնաց ժողովրդական լայն մտառաների ինտերեսներին:

Այս հանդամանքը իրավունք է տալիս մեզ խոսելու «Վերը Հայաստանի» վեպի և նրա հեղինակի ո՛չ միայն պրոգրեսիվության և սեալիզմի մասին, այլև նրա ժողովրդայնության մասին, որի մասին, սակայն, մի փոքր հետո:

Չեոք զարկելով պատմական մեծ վեպ գրելուն, Աբովյանն իր մեջ դառել է պատմության այն զորեղ զգացումը, որն անհրաժեշտ է անցյալը Հարազատորեն վերաբարելու համար:

Ա. Ա. Պուշկինը պահանջում էր զրողից՝ առաջնորդել իր ընթերցողին գեպի նկարագրվող դարը և երբեք զդիմել գուհիկ մողենիզացիայի: Այդ տեսակետից Աբովյանը միանդամայն ճիշտ է ըմբռնել և գործազրել իստորիզմի սկզբունքը, այսինքն, պատմական թեման պատմականորեն մեկնաբանելու շնորհք է ցուցաբերել:

Միանդամայն իրավացի է ակ. Ա. Տերտերյանը, երբ իր «Խաչատուր Աբովյան»-ում հայտարարում է, թե՝ «Իր պատմական հայացքներով Աբովյանը կանգնած էր XIX դարի առաջին քառորդի պատմագիտական առաջավոր հայացքների մակարդակի վրա»: Ինչո՞վ է նա հիմնավորում իր պնդումը: «Պատմությունը նրա համար (Աբովյանի համար:— Հ. Գ.) ժողովրդի կյանքի և գործի մասին մի իրանդավառ պատում է, ժողովորդ, որն իր ամբողջ հասակով ծառացել էր ասիական կոսկիտ բռնակալության դեմ, և փարելով ոռու ժողովրդին (ոռու պետականությունն ընդունելու դնով), իր պատմական պրոգրեսն էր ապրում»:

«Խաչատուր Աբովյան»-ի հեղինակը ճիշտ է դատում նաև այն ժամանակ, երբ գրում է, թե՝ «Հեղինակը իր դարաշրջանի պատկերացման ճշտությունը շաղարտելու համար կարող էր և պետք է դրվագեր ցարիզմը՝ պարսկական բարբարոսության համեմատությամբ»:

Եվ ո՞վ կարող է ժխտել, որ պարսկական սատրապության ժետ համեմատած, ցարիզմը պատմական առումով շարիքներից փոքրագույնն էր:

Այս բոլորը շեն կարող ստիպել մեզ՝ մոռանալ այն հանդամանքը, որ հետագայում Աբովյանը իրոք հիասթափություն ապրեց, երբ ոռուական ցարիզմի ժետ կապված պատմականորեն անհրաժեշտ իլլուզիաները հօգս ցնդեցին ցարական իրականության հան-

դեպ, և նա ցարական ինքնակալության դեմ ծառացավ իրքի ակտիվ գժգոհներից մեկը:

Այստեղ կարևորն այն է, որ Աբովյանը շատ խորն զդաց պատմության պահանջը, զորեղ կերպով արձագանքեց այդ պահանջներին և հարազատորեն ապրեց այդ բոլորը: Մարքսը և Էնդհամը պատմական վեպերի մեջ ուշի-ուշով հետևել են, որպեսզի տեսնեն, թե պատմավիպատասները որչափով հարազատորեն են կարողանում վերաբռնդել անցյալը:

\* \* \*

Այսպիսով, գրական-գեղարվեստական երկերի վերլուծման ժամանակ դասառում պարտավորվում է նաև պարզաբանել աշակերտներին, թե ո՞րշափով ճշմարտացի է արտացոլում տվյալ երկը՝ իրականությունը: Դրա համար պետք է կարողանալ հմտորեն օգտվել գրականության պատմական մեկնաբանության մասին վ. ի. Լենինի աշխատություններով, նրա ուսմունքով իմացության մասին, նրա «արտացոլման» տեսությամբ:

Վ. ի. Լենինի՝ իմացության մասին ուսմունքի մեջ հիմնականը պետք է համարել այն, որ մարդկային իմացությունը արտացոլում է ուսալ իրականությունը, մեզնից դուրս օբեկտիվորեն գոյություն ունեցող աշխարհը:

Այդ մասին «Համեկ(բ)Պ» պատմության համառոտ դասընթաց»-ում կարդում ենք. «Ե հակադրություն իդեալիզմի, որը վիճակում է աշխարհի և նրա օրինաչափությունների ճանաշման հարավորությունը, չի հավատում մեր գիտելիքների ստուգությանը, չի ընդունում օբեկտիվ ճշմարտություն և գտնում է, որ աշխարհը լի է «ինքնին իրերով», որոնց ձանաշել գիտությունը երբեք չի կարող,— մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը ելուամ է այն բանից, որ աշխարհը և նրա օրինաչափությունները միանալան ճանաչելի են»\*:

Այսպիսով, «գրական-գեղարվեստական երկերի վերլուծման մեթոդիկայի մեջ առաջին արմատական գրույթը մեզ համար օբեկտիվ աշխարհի ճանաչելիության ընդունումն է: Լենինը իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիզմ» աշխատության մեջ ասում է. «Ամեն մի խորհրդավոր, իմաստակային, խորամանկամիտ տարբերություն երեւովթի և ինքնին իրի միջև փիլիսոփայական կատարյալ անհեթեթություն է: Իրոք, յուրաքանչյուր մարդ միլիո-

\* «Համեկ(բ)Պ» պատմության համառոտ դասընթաց», Հայոցեանը երեսն, 1946 թ., էջ 153—154.

նավոր անդամներ՝ գիտել է «ինքնին իրի» պարզ, ակնհայտ փոխակումը երևութիւն, եթք ինքնին իրը դառնում է «իր մեզ համար»։ Այս փոխարկումն է հենց իմացությունը»\*:

Այս գրութը իրավունք է տալիս մեզ գեղարվեստական գրականությունը դիտելու որպես իրականության ձանաշման, սովորողների և առհասարակ ընթերցող հասարակության շրջահայեցողության լայնացման հղորագույն դեհնք:

Այսպիսով, գեղարվեստական գրականությունը հանդիսանում է իրականության ձանաշման ձևերից մեկը։ Այս տեսակետից էլ գրական-գեղարվեստական երկի արժեքը պետք է չափվի այն բանով, թե որքա՞ն էական են հասարակական կյանքի այն կողմերը, որոնք իրենց արտացոլումն են գտել տվյալ երկի մեջ, և թե որքանո՞վ գրողը կարողացել է խորը և ճշմարտացի արտացոլել իրականությունը։

Ֆ. Էնգելսը մեծ գնահատական էր տալիս Բալգակին՝ նրա ժամանակակից իրականության խորը և ճշմարտացի պատկերման և վերլուծման համար։ Լենինը մեծ էր համարում Տոլստոյին՝ իր ժամանակի կարևորագույն հասարակական-քաղաքական իրադարձությունների՝ «ուսական ուղղուցիայի հայելի» լինելու համար։ Արովյանին պետք է մեծ համարել նրա համար, որ նա, որպես գրող և մտածող, իր ընտրած էպոփնան ցուցագրեց պատմագիտի ձշտությամբ և գեղագետի գունեղ ներկերով։ «Նա իր մտքի և հոգու լուսարձակով լուսավորեց իր դարը, տալով ոչ թե սոսկ փաստեր միայն, այլ նրանց բարձր գեղարվեստական ընդհանրացումը», — ասում է ակ. Ա. Տերտերյանը։

Արովյանը իր վեպում միաժամանակ հանդես է բերել պատմական կոլորիտ ստեղծելու մեծ վարպետություն։ Պատմական մոտիկ անցյալը վերաբարեկելու հետ միասին, Արովյանը կարողացել է իրականացնել նաև իր հիմնական միտումը՝ «զատավճիռ կարդալ իրականության վրա», ինչպես պահանջում էր Վ. Գ. Բելինսկին։

Արովյանի «Վերք Հայաստանի»-ն պատմական վեպ է, և նրանում ուժեղ է պատմական տվյալ դարաշրջանի գեղարվեստական պատկերումը։ Մեր աշքերի առջև կենդանի կանգնում է XIX դարի առաջին հիմնամյակի հայ իրականությունը։ Վերք Հայաս-

\* Վ. Ի. Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիզմ», Պետրաս-Քաղաքական գրականության հրատարակչություն, Երևան, 1938 թ., էջ 124։

տանի»-ի եզերում կինո-ժապավենի նման մեր առջեց գալիս անց-նում են այն բոլոր իրադարձությունները, որոնք բնորոշ են Հեղի-նակի պատկերած պատմական մոմենտի համար: «Իր պատմական վեպով Արովյանը կարողացել է կենդանագրել մի ամբողջ էպոփիա իր տիպական գծերով, այնքան համոզիլ ու պերճախոս, որ նրա-նից կարելի է ավելի շատ բան սովորել, քան շատ հաստափոր ու-սուօննասիրություններից», — ասում է ակ. Ա. Տերտերյանը, «Հե-տեմբելով ինքնակ՝ Բալզակի «Մարգկարին կատակերգությանը» տված գնահատականին:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկերի վերլուծման ժամանակ եր-կի վերնագիրն անգամ պետք է քննարկման նյութ դառնա, պետք է պարզաբանվի, թի ո՞րքան ճիշտ է արտահայտում նաև ո՞րքան լրիվ է ամփոփում իր մեջ Հեղինակի միտումը՝ երկում առաջ քաշ-ված պրոբլեմները, երկի Հիմնական թեման՝ նրա գաղափարական բովանդակությունը: Երկի վերնագիրը սոսկ արտաքին ակսիսուար չէ նրա համար, այլ նրա ներքին բովանդակությունը դրսենող էական: ու կարեսը հանգամանք: Այս տեսակետից ավելի մեծ հե-տաքրքություն են ներկայացնում ալեքորիկ, խոսուն վերնագրերը, ինչպես օրինակ, «Մարգկարին կատագերգություն», «Բնչպես եր կոփում պողպատը», «Հառաշանք» և այլն, և այլն:

Արովյանը իր երկը վերնագրել է «Վերը Հայաստանի, ողբ հայրենասիրի»:

Հայ Միքերալ քննադատությունը, ենելով Հեղինակի՝ իր վե-պին տված վերնագրից, արել է սխալ եղբակացություններ: Ենոն Արովյանի երկը անվանել է «Վշտի ավետարան», ընդունելով այն որպես սոսկ մի ողբասացություն, լացի գրականություն: Նոյն միտաքն է արտահայտում Կ. Կուտիկյանը «Գարուն» գրական-քննա-դատական ալմանախում (Գիրք 3-րդ, էջ 23, 1912 թ.) զետեղված իր «Հանճարեղ սիրտ» վերնագրով հոդվածում: «Ողբով սկսվեց մեր աղքացին մտքի սթափումը, ողբ ու տանջանքներով արտահայտվեց երկու հայ մտածողների քաղաքական վիշտը» (խոսքը Արովյանի «Վերը Հայաստանի»-ի և Պատկանյանի «Արաքսի արտասուր»-ի մասին է: — Հ. Դ.):

Մինչդեռ Հ. Թումանյանը իր «Արձան Խաչատուր Արովյանին» Հոդվածում գրում է.

«Երեխուց աշքը բաց արակվ՝ տեսակվ՝ թի ինչ անսասելի սեղու. թյան է քաշում մեր ազգը էն ժամանակվա պարսից տերության ձեռքին. ու ազգի էս ծանր վիճակը վերք դառավլ՝ կպավ սրտին: Մհեմացավ, օտար երկիր գնաց, ոտամ առավ, իր սրտի վերքն էլ հետք մեծացավ ու խորացավ: Ահա էս խոր վերքը, իր աշքի տեսած տանջանքն ու տառապանքը, կրիվն ու բազույթունը հրեղեն լեզվով նա պատմեց (ընդգծումը մերն է: — Հ. Դ.) մի գրքի մեջ՝ անունը դրեց «Վերք Հայաստանի»: Մեր ազգի սիրած «Վերք Հայաստանին» («Թումանյանը քննադատ», էջ 203):

Ասված է պարզ ու մեկին: «Վերք Հայաստանի»-ի մեջ Արովյանը հայ ազգի տանջանքն ու տառապանքը չէ պատմել միայն, այլ «Բրեղեն լեզվով պատմել է նաև նրա կրիվն ու բազույթունը»:

Մի այլ տպիթով նույն Թումանյանը Խաչատուր Արովյանի մասին ասում է. «Մինչդեռ հյուսիսում պանդուստ գրողները հայ ժողովրդի տառապանքներն էին երգում, այսուել՝ մեղանում կոտորածների ու ասապանքի տակ հեծող ժողովրդի միջից զուրս են գալիք բնաշխարհիկ գրողներ— Խաչատուր Արովյան, որն իր հերոսին ներկայացնելով այդ կրակ դժոխքի մեջ, հայրենի հողի վրա, պրառք ահապին դարդ ու ցավ ամբարած՝ հերոսի բերանավ իր մաղձն է բափում բոնուրյան և անարդարության դեմ» (ընդգծումը մերն է: — Հ. Դ.)\*:

Արովյանն իր վեպում հայ հայրենասերի վերքն ու սպառ կոսի վորել է ոչ որպես պասսիվ, զառն խլճահարության արժանի ողբասացություն, այլ որպես յուրահատուկ բողոք, ընդվզում՝ ժամանակի տիրող իրականության դեմ, որպես այդ իրականության փոփոխման հասարակական պահանջ:

\* \* \*

Այժմ խոսենք գրական-գեղարվեստական երկի և նրա գրողի ժողովրդայնության հարցի մասին:

Գրողի ժողովրդայնության հասկացողությունը չի կարելի անշատել նրա ստեղծագործության զասակարգայնության և պարտիստականության հասկացողությունից: Գրողի ժողովրդայնությունը նրա անունը զարդարող էպիտետ շպետք է լինի: Տհսական այդ մհծ ու կարևոր հասկացողությունը պետք է բխի գրողի ստեղծագործության բան էությունից, նրա ողուց, այլապես այդ տերմինի

\* «Թումանյանը քննադատ», էջ 114.

մակերեսային, էտիկետային գործածությունը կնսեմացնի տեսական այդ լուրջ ու կարևոր ընդհանրացման արժեքը:

Երկի կամ նրա գրողի ողջ ստեղծագործության ժողովրդայնությունը նախապես շպետք է ազդաբարպիֆ. նա պետք է բխի երկի կերպարների և նրանց արտահայտած գաղափարների, երկի բովանդակության ու ձեռի լուրջ և հանգամանորեն կատարված վերլուծությունից. նա պետք է ելնի այն բանից, թե որքա՞ն է աշխը ընկնում տվյալ երկը իր խորության և ուժի, իր ճշմարտացիության և անկեղծության, էսթետիկական օրիգինալության տեսակետից. նա պետք է ելնի այն բանից, թե որպիսի՛ դեր է խաղացել տվյալ երկը կամ գրողի ողջ ստեղծագործությունը՝ իր ժամանակի և հետագա ժամանակների համար, այն բանից, թե ի՞նչպիսի գնահատական է տվել նրան գրական առաջավոր քննադատությունը, թե դաստիարակչական ինչպիսի նշանակություն է ունեցել այն: Եվ եթե կպարզվի, որ նա դարձել է միլիոնների սեղանի գիրքը՝ մտել է միլիոնների մտածողության և լեզվի մեջ՝ որպես նրա անկապտելի ոնքեցվածքը, դարձել է համաժողովրդական, աղքային կուլտուրայի բաղկացուցիչ մասը, ինչպես Մ. Գորկու «Մայրը», Ն. Օստրովսկու «Ընչպես էր կոփիվում պողպատը», Ալ. Ֆալեկի «Երիտասարդ Գվարդիա»-ն, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ին, Հ. Թումանյանի «Անուշը», Ավ. Խաչակրյանի «Սասմա Մհեր»-ը և այլն, ապա այն ժամանակ նրա ժողովրդայնությունը կիխի ոչ թե վրայից փակցնովի մի պիտակ, այլ տեսական ընդհանրացմով հասկացողություն, երկի բովանդակության հասկացման համար:

Գրական երկի և նրա հեղինակի ժողովրդայնության ժաման խոսելիս, նրա՝ ժողովրդական մտածողություն, ժողովրդական գաղափարներ արտահայտելուց բացի, պետք է սրոնել և զանել նաև, թե նրանում ո՞րտեղ և ինչ շափով են երկում ժողովրդական բանավոր ստեղծագործության հետքերը: Այսպես, օրինակ, եթե մենք վերցնենք Հ. Թումանյանի «Անուշ»-ը, նրա հենց «Նախերդանք»-ի մեջ մենք կտեսնենք այդ աղքացությունը: Նրա «Նախերդանք»-ն իրենից ներկայացնում է ոեալ իրականության պատկերման միացումը հեքիաթային ֆանտաստիկայի հետ. ժողովրդական հեքիաթի տրադիցիոն պատկերացումներ են, օրինակ, վերիները, որոնք «Բազմած լուսնի նուրբ շողերին, Հովի թիկն թոշելով»՝ գիշերով հավաքվում են սարի գլխին, ողբում սիրահարների վաղամեռ սերը, ու երբ շողում է արկի ցոլը, անտես անհետ շքանում

են, «իսոր սուզվում են ակն աղբյուրի, մտնում կաղնին հաստաբուն ու լեռնային վտակների ալիքները պաղպաջուն»:

Թումանյանի «Անուշ»-ի ժողովրդայնությունն իրեն զգալ է տալիս նաև նրանում տեղ գտած ժողովրդական հավատալիքների, նախապաշտարմունքների (անեծքը, վիճակ զցելը, դարի զցելը, երազը կատարվելը և այլն)՝ առկայության շնորհիվ:

Այնուհետև կարեռ հանգամանք է նաև այն, թե ո՞րքանով է հեղինակն օգտադրել ժողովրդական դարձվածքները, ասացվածքները, հանելուկները և թե ո՞րքանով են դրանք օրգանապես ձուլվում երկի հետ: Երբեմն նրանք այնպես են ձուլված լինում երկի հետ, որ ընթերցողը իսկուն չի կուհում դրանց ժողովրդական լինելը: Այսպիս, օրինակ, Թումանյանի ստեղծած երկի մեջ այնքան խորն է թափանցել ժողովրդայնությունը, այնպես է հյուսվել նրա հետ, որ զժվար է որոշել՝ ո՞րն է հեղինակի ստեղծագործությունը, որը՝ ժողովրդինը: Ի՞նչը կարող է ավելի մեծ պատիվ բերել զրոյին, քան այն, եթե նա ժողովրդից ստանում և ժողովրդին է վերադարձնում նրա տվածը, արվեստի հզոր լուսարձակով լուսավորելով նրա խորքում թագնված հշմարիտ գեղեցկությունները:

Նեկրասովի «Ո՞վ է Ռուսիայում լավ ապրում» պոեմի մասին ասել են, թե նրա թեման ինքը ժողովուրդն է, և այդ ժողովրդայնությունը արտահայտվել է նրա ձեր՝ մեջ՝ կոմպոզիցիայի, բանաստեղծական լեկսիկայի, ոտանավորի կառուցվածքի մեջ: Նույնը, իրավամբ, մենք կարող ենք ասել Հ. Թումանյանի, Խ. Աբովյանի, Ավ. Խաչակրյանի, Հ. Հովհաննիսյանի մասին՝ մեր ազգային և ժողովրդական մեծ զրոյների մասին: Ժողովրդական բանավոր ստեղծագործության խորը ներգործությունը նրանց ստեղծագործության ակն-աղբյուրն է եղել:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկերի վերլուծման ժամանակ անհրաժեշտ է որոշել ոչ միայն նրա ժանրը, այլև պարզաբանել, թե ինչո՞ւ է հեղինակը հատկապես այդ ժանրը ընտրել իր միտումների արտահայտման, իր երկի գաղափարական բովանդակության դրսեորման համար: Հարկավոր է լուրացնել տալ սովորողներին, որ երկի ժանրը պատահական երևուցիչ չէ տվալ ստեղծագործության համար, այլ նա պայմանավորված է ու համապատասխա-

նեցված տվյալ երկի ներքին բովանդակության հետ։ Ասածները կոնկրետացնելու համար նորից անդրադառնարք եւ Արովյանի «Վերք Հայաստանի» վեպին։

«Վերք Հայաստանի»-ի էջերը կինո-ժապավենի նման մեր աշ-քերի առաջ վառ, կենդանի ցուցադրում են պատմական այն ժո-մենաթը, որը ընտրել է նրա հեղինակը։ Հետեւով մեծ պատմափ-պասաններ՝ և Տոլսոոյին և Վ. Հյուգոյին, Արովյանը պատմու-թյունն օգտագործել է իր հասարակական-քաղաքարական գաղա-փարների ագիտացիացի համար։ Սակայն, սովորողների մեջ շպետք է ստեղծվի այնպիսի տպավորությունն, թե իբր, Արովյանը իր երկի ժանրը ընտրելով պատմական վեպի ժանրը, նպատակ է ունեցել ընթերցողին շեղել ներկայից։

Ընդհակառակը, իր ընտրած պատմական ժանրով ցուց տո-լով հայ ժողովրդի՝ պարսկական բռնակալությունից ազատագրվե-լու բուռն ձգուամները, ցուց տալով ժողովրդի սպասելիքները ցարական Ռուսաստանից և նրա հույսերի ու ակնկալությունների փլուզումը, հակառակելով նրա բուռն խանդավառությունը դրան անմիջապես հետևող հիասթափությանը, Արովյանը դրանով հենց բողոքում է ժամանակի տիրող կարգի դեմ։ Եվ հենց դրանով էլ Արովյանը ընթերցողի միտքը ոչ միայն չի շեղում ներկայից, այլև ներկայի հարատապ հարցերն է բորբոքում։

«Զգվելով այդ ժամանակվա քաղաքական խեղուկ մթնոլոր-տից, Արովյանը դիմել է պատմական թեմատիկացին, ավելի ազառ ու անկաշկանդ արտահայտելու համար իր իդերն ու ակնկալու-թյունները, իր հիասթափությունն ու վրդովմունքը, իր տվյալանք-ներն ու ըմբոստացումները», — ասում է ակ. Ա. Տերտերյանը։

Արովյանի «Վերք Հայաստանի» վեպի ժանրի մասին խոսհ-իս անհրաժեշտ է ուշադրովթյան առնել մի կարևոր հարց ևս։ Արդյո՞ք պետք է, իսկապես, պատմական վեպ համարել «Վերք Հայաստանի»-ն։

«Վերք Հայաստանի»-ն պատմական է ոչ միայն նրա համար, որ նրանում գործող բոլոր հերոսները (շնչին բացառությամբ) պատմական մարդիկ են, որոնք ապրել և գործել են հեղինակի աշխի առաջ, նրա հետ միատեղ ոգևորվել են նույն գաղափարնե-րով, հուզվել, խանդավառվել են, հիասթափվել ու տիրել են նրա հետ, պայքարել են իրենք իրենց և շրջապատող իրականության դեմ, այլ նա պատմական է նաև նրա համար, որ Արովյանը նրա-

նում արտացոլել է հայ ժողովրդի պատմության մի նշանավոր գարձակետը, որը, սակայն, ժամանակագրական կարգով ինչքան էլ մոտ էր նրա վեպի գրության ժամանակին, բայց արդեն անցյալի գիրկն էր նետվել, որը «դեռ երեկ լինելով, այնուամենայնիվ, մի անդառնալի անցյալ էր», — իրավացիորեն ասում է ակ. Ա. Տերտերյանը:

Հայ լիրերակ քննադատությունը, հանձին կեոյի, գտնում էր, որ Արովյանը ճիշտ չի վերնագրել իր երկը «պատմական վեպ», որ Արովյանի վեպը քանուանական թվականների համար ավելի ժամանակակից վեպ էր, քան պատմական, քանի որ հեղինակն ինքը այդ վեպքերին ականատես է եղել, դրանք այդ միջոցին զեռ պատմություն չէին կազմում\*:

Հարցը բոլորովին նրանում չէ, թէ հեղինակը ժամանակակից է եղել իր երկում պատկերած պատմական անցյալին, կամ այդ անցքերից հետո է ապրել և պատկերել դրանք, այլ կարևոր այսպիսի այն է, որ ժողովրդական այն շարժումները, որոնք արտացոլվել են այդ աշխատություններում, պատմական մեծ, կարեւոր ահղաշարժեր են, որոնց երկու ժայրերը ժամանակով թեև իրար շատ մոտիկ են, բայց որպես երկու բեկոներ, որակապես խիստ տարբեր են միմյանցից: Թոթափելով պարսկական դաժան լուծը, հայ ժողովուրդը իր բախտը վերջնականապես և անդառնալիորեն կապում էր ուս մեծ ժողովրդի հետ, և հայ ազգի կյանքում սկըսվում էր մի նոր պատմություն: Պատմավիպասանի մեծությունն էլ հենց նրանում է կայանում, որ նա կարողանա «որսալ» ժողովուրդների կյանքի համար վճռական, շրջադարձային «մի ակրնեարթ» և կարողանա «կանգնեցնել» «այդ ակնթարթը» իր ստեղծագործական կտավի վրա, որպես այդ «մեծ վայրկյանը» համերժացնող գեղարվեստական անմահ հուշարձան: Այդպիսին են Վ. Հյուգոյի «Խննսուներեք»-ը, և. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն»-ը, այդպիսին է Եղիշեի «Վարդանանց պատմություն»-ը, և. Արովյանի «Կերք Հայաստանի»-ն և այն, և այն: Այդ առումով Արովյանը շատ մեծ է, քանի որ նա, իր «Վերք Հայաստանի»-ում, որպես «անխարդական հայելու մեջ, արտացոլել է պատմական մի անկրկնելի մոմենտ: «Վերք Հայաստանի»-ն մեր օրերում ապրում է իրեւ սե անցյալի մի բեկման մեծ մոմենտի պատկերավոր վա-

\* Այս, «Խուսահայոց գրականություն—սկզբից մինչեւ մեր օրերը», Վեհետիկ—Ս. Գագար, 1904 թ., էջ 168—169.

վերինը, իբրև հայ ժողովրդի մեծ սպասելիքների առջազանք և իբրև հայ ժողովրդի ազատատենչ ոգու սիմվոլ», — շերմորեն որձանագրում է Արովլանի լավագույն ուսումնասիրուղ ակ. Ա. Տեր-տերյանը:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկի վերլուծման ժամանակ շատ կարևոր է, որպեսզի սովորողները կարողանան համառոտ և ամբողջացրած ձեռվ պատմել նրա սյուտեն: Առաջին հայացքից թվում է, թե գա շատ հեշտ ու հասարակ բան է: Բայց այդ այգակա չէ, մանավանդ այնպիսի գեղքերում, երբ երկի բազմասյուժե է: Առանց երկի սյուտեն լավ իմանալու, սովորողները չեն կարողանա հաջողությամբ վերլուծել այն: Այսպիս, օրինակ, եթե նրանք չկարողանան ամբողջականորեն պատկերացնել Արովլանի «Վերք Հայաստանի»-ի սյուտեն, նրանց համար շատ ու շատ հարցեր կմնան անբացատրելի, առանց իմաստավորվելու: Ասածներու պարզաբանելու համար համառոտ կերպով շարադրենք նրա սյուտեն և ցուց տանք այդ կարեոր հարցերից մեկը, որը շատ բնորոշ էր հայ ազգի համար պարսից տիրապետության ժամանակաշրջանում և առհասարակ:

Իր վեպում Արովլանը մի ամբողջ պատմական շարժում է նկարագրել՝ տաճկահայերի և պարսկահայերի դժգոհությունը տիրող ուժիմից և այն շանքերը, որոնք ուղղված են այդ ուժիմի դեմ, նրանից ազատվելու և լուսավոր ու երջանիկ մի կյանք ստեղծելու նպատակով:

Արովլանն իր վեպը սկսում է ձմեռվա նկարագրությամբ: Բարեկենդան է: Գյուղական համայնքը անծայր հրձվանքի մեջ է: Ազգային խաղերը՝ շիրիդն ու լախտին, քիքն ու ուրախությունը, բռնել են հրապարակը:

Ուրախության և սպասության բարձր մոմենտին ամեն ինչ իրար գլխով է անցնում: Կարծես ամպրոպ է ճայթում: Սարդարի ֆարբաշները փափունում են զյուղի ամենագեղեցիկ աղջկան՝ Թագուհում՝ իր մոր մինուճարին: Աղջ զյուղը պապանձվում է, սառչում: «Նատերի պռոշները աշու ճաքում են»:

Միայն քաջ Աղասին է, որ չի ընկրկում թշնամու զորեղության առաջ և կովի է ենում այդ քատմների արարքի դեմ: Նա սպանում է Սարդարի ֆարբաշներին, ազատում է Թագուհուն, բայց վտան-

գում է իր կյանքը, վտանգում է իր ընտանիքը: Ընկերները ստիպում են նրան՝ պլովն առնել և փախչել, աղատվել Սարդարի հետապնդումից:

Աղասին «զաշաղ» է դառնում: Իր քաջերով նա Հարձակումներ է գործուց այս ու այնտեղ պարսից զորքերի և իշխանակորոների միա և մեծ հաղթություններ է տանում: Նրա հայրենասիրության ու հերոսության փառքը տարածվում է Հայ ժողովրդի մեջ, ժողովորդը նրան փառաբարձրում է իր երգերում:

Սկսվում է ոռու-պարսկական պատերազմը Հայաստանի սահմանների վրա: Պարսիկները պարտվում են: Կնքվում է Թուրք-մեն-Զայի դաշնադրությունը: Աղասին իր ընկերներով միացած լինելով ոռոսական հաղթական բանակին, դալիս է Երևան: Հաղթական մուտքի հենց սկզբում, երբ նա ցանկանում է իր հորը զնդանից ազատել, ուր դցել էին նրան որդու «Հանցանքի» և փախստյան պատճառով, նա սպանվում է պարսից զորականի ձեռքով: Նրա սիրելիները նրա դիակի վրա ինքնասպանություն են գործում:

Աղասու և նրա սիրելիների մահով հաղթանակ է տանում Հայ և ոռու ժողովուրդների քաղաքական և կուտուրական դաշինքը:

Այստեղ սյուժեի գարգացման մեջ ամենից հետաքրքրականն այն է, թե ինչո՞վ է նա սկսվում: Դա «Վերք Հայաստանի»-ի համար և յուրաքանչյուր ամեն մի երկի համար պատահական խնդիր չէ:

Եթե մենք վերցնենք, օրինակ, Գոնչարովի «Օբլումով» վեպի առաջին մասը, որն սկսվում է «Օրլումովը անկողնում» պատկերով, իսկուսն կզանք, թե որքան նշանակալից է այդ պատկերը Օրլումովի բնութագիրը հասկանալու համար: Գոնչարովի վեպը կալվածատեր ազնվականության պարագիտալին կյանքի՝ անգործունեության, ծայրաշեղ ծովության, ապատիալի, հասարակական ինդիֆերենտիզմի փայլուն ցուցադրությունն է. իսկ իլլուզայի անկողնում եղած տեսարանը ինքնին արդեն դրանց կլինտեսենցիան է:

Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն սկսվում է բարեկենդանի տոնակատարման նկարագրությամբ: Այդ ուրախ տոնսակատարության ժամանակ, բարեկենդանի քեֆի ու հանաքների տաք պահին ամեն մեկն իրեն զգում էր հրաբուխի վրա, ամեն վայրկյան աղետ կարող էր լինել: Պարսից նիրապետության օրերին Հայի ո՛չ միայն գույքն ու կյանքն էին մշտական անապահով փիճակում, այլև պա-

տիվը. ամեն վայրկյան կարող էին քաշել առանել նրա և՝ ունեցվածքը, և՝ կինը, և՝ զավակը:

Բայց և այնպես քեֆն ու ուրախությունը հորդում էին, կյանքի գուրայում կոփված ու եփված գյուղացին ասում էր. «Ճանենք, քեֆ անենք, ո՞վ ա խաբար, թե էգուց գիխներիս ինչ ա պալացում»: Նահապետական գյուղացու պարզ, անմիջական, ռեալիստական կենսահայեցողությունը թելադրում էր նրան. ապրել ու կյանքը վայելել ժողովրդական «քեֆ անողին քեֆ շի պակսիլ» ասացվածքի ոգուն համապատասխան:

Արովյանի վեպի սյուժեի այսպիսի սկսվածքը նպատակ ունի ցուց տալ, որ չնայած իր դառն իրավիճակին, հայ ժողովուրդը պահպանել էր իր լավատեսությունը վաղվան օրվա համար, պահպանել էր դիմադրելու ոգին: Բարեկենդանի ուրախ տոնակատարման մեջ հայ ժողովրդի կենսախնդությունն է մարմնավորված. ինչքան էլ դառն է եղել օտարերկրյա տիրապետությունը, հայ ժողովուրդը երբեք շի կորցրել այդ կենսախնդությունը: Կենարաց օպտիմիզմը աշխատավոր ժողովուրդների համար փրկության խորհիս է եղել անցյալի և կյանքի ամեն տեսակ դառնությունների օվկիանոսմ:

Սա մի իրողություն է, որի վրա պետք է ուղղել մեր սովորողների ուշագրությունը, բարձր գնահատելով նրա գաստիարակչական մեծ նշանակությունը:

Սա մի հարց է, որի պարզաբանման շնորհիվ սովորողների մտածողության մեջ իմաստավորվում է Արովյանի մեպի այսպիսի սկսվածքը, որն իր հերթին իմաստավորում է ամբողջ վեպը:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է պարզաբանել գրական այն ուղղությունը, որը գործադրել է հեղինակը իր երկն առեղծագործելիս: Այսպես, օրինակ, Արովյանի «Վերք Հայաստանի»-ն վերլուծելու ժամանակ մեզ համար կարենոր հարց է, թե իր ժամանակի իրականության արտացոլման համար Արովյանը ի՞նչ դիրքերից է եղել՝ ուկալիստական, թե՝ ոռմանտիկական ուղղության դիրքերից:

Գրական այս երկու ուղղությունները ամենից ավելի տեսական են եղել և գրողների ավելի մեծ մասսա են գրավել: Միաժամանակ, այս երկու ուղղությունները՝ գրեթե միշտ՝ միմյանց նկատմամբ պայքարի մեջ են եղել:

Դժվար է առհասարակ մատնանշել մի որևէ հեղինակ, որն ամբողջամբ հետևած լինի միայն ոռմանտիզմին կամ միայն ուսալիզմին: Համաշխարհային նշանավոր շատ գրողների մոտ երկու այդ հիմնական ուղղությունների տարրերը ևս կան:

Խոշոր գեղագիտների մոտ առհասարակ ոռմանտիզմն ու ուսալիզմը միացած են հանդես եկել: Գորկին ասել է, թե՝ դժվար է անել՝ թալգակը, Տուրքեներ, Տոլստոյը, Գոգովը, Լեսկովը, Զեխովը—ի՞նչ են՝ ոռմանտիկ, թե՝ ուսալիստ:

Արովյանի մոտ երկու այդ հիմնական ուղղությունների՝ ոռմանտիզմի և ուսալիզմի տարրերը ևս կան: Այնտեղ, որտեղ Արովյանը նկարագրում է հայ կենցաղը, նա գերազանցորեն ուսամստէ, իսկ երբ իր գինավոր հերոսին է նկարագրում կամ բնութագրում, նա ոռմանտիկ է: Արովյանի ոռմանտիզմի գագաթը նրա Աղասու կերպարն է, ուսալիզմի գագաթը՝ հայկական նահապետական գյուղական կենցաղը և հայկական պեյզաժը:

Որ իրոք՝ գրողը երևութը պատկերում է այնպես, ինչպես ինքն է տեսնում այն (բայց Գյորեի ձեւակերպման), որպես ապացուցյալ զրան, ակադեմիկ Ա. Տերտերյանը մի հիանալի համեմատություն է անում: Նա ասում է. «օրինակ, Երևանի բներդը Նիկոլայ I-ը տեսել է այլ կերպ և այն պատկերելու համար գործադրել է երկու բառ՝ «կավի կճուծ»: իսկ Արովյանը, նկարագրելով այն սարսափները, որ այդ բներդը ազդել է իր և իր հայրենակիցների վրա, այդ սարսափները հաղորդում է ուրիշներին, ոռմանտիկ գույներով պատկերելով հայի ստրկության այդ սիմվոլը»:

Եվ դա շատ բնական է: Նիկոլայ առաջինի աշխին պարսկական այդ արխայիկ կասուցվածքը մի «կավի կճուծ»-ի էր նմանում, որը ո՛չ մի սարսափ չէր կարող ներկայացնել իրենից նրա այն ժամանակվա. Համար հզոր զենքի առաջ: Իսկ պարսկական բռնակալության տակ հեծող հայ ժողովրդի զավակը Երևանի բներդի ոռմանտիկ նկարագրության մեջ մեծ տաղանդով արտացոլել է ուսալիստական հատիկը՝ հայ ժողովրդի քաղաքական սարկության սիմվոլը: Երևանի բներդի նկարագրության մեջ Արովյանի մոտ ոռմանտիզմն ու ուսալիզմը հավասարաթեք են:

Ինչպես ասացինք, Արովյանի ոռմանտիզմի գագաթը Աղասու կերպարն է, իր արի, ուժեղ, կենսախինդ բնավորության հետ մեկտեղ Աղասին դրսկորում է որոշ սենտիմենտալիզմ, որը ոռմանտիզմի հատկանշական դժերից մեկն է:

Արովյանի մոտ, սակայն, ոռմանտիզմը երբեք չի կրում

սեակցիոն, միստիկական բնուվթ: Ճիշտ է ասում ակ. Ա. Տերտերյանը, թե՝ «դա ակտիվ՝ մարտնչող քաղաքացիական ռոմանտիզմն է», որի մասին այնքան դրականորեն է արտահայտվել Գորկին և որը գործադրել է ինքը՝ Գորկին, իր հոչակավոր «Մայրը» վեպում:

Դա վերընթաց ռոմանտիզմն է և ոչ թե վայրընթաց ռոմանտիզմը: Դա ակտիվ ռոմանտիզմն է և ոչ սեակցիոն ռոմանտիզմը:

Սեակցիոն ռոմանտիկները քարոզում էին կրավորականություն, մարդու կամեցողության թմրեցում: Իսկ ակտիվ ռոմանտիզմը քարոզում էր բմբնատացում տիրող իրականության և ճնշման դեմ:

Աբովյանի ռոմանտիզմը ակտիվ, քննադատական ռոմանտիզի է: Նրա հերոսը՝ Աղասին դժոո՛ւ է ներկայից՝ իր ժամանակի տիրող պարսկական բռնակալական ռեժիմից, ողակքարում է նրա դեմ, և ոչ միայն պարսկական բռնակալության գեմ, այլ իր ժամանակի իրականության շատ ու շատ խոցելի երկույթների (կենցաղակին, կրոնական և այլն) դեմ, ձգտում է վերափոխել այդ իրականությունը, երազում է լավ բաների մասին և այս բոլորը արտահայտում է ակտիվ պայքարի միջոցով:

Ռոմանտիզմին զգալի տուրք տալով հանդերձ, Աբովյանը նույր զիտող է, օժտված ոեալ կյանքի սուր զգացողությամբ: Որոշ էշերում փայլում է նրա ռեալիստական տաղանդը: Էշեր, որոնք կարելի է հակագրել «Վերք Հայաստանի»-ի ռոմանտիկական հատվածներին:

Աբովյանի ստեղծագործության սեալիստական գիծը հաղթանակ է տարել ինչպես հայ գյուղական կենցաղի, այնպես էլ հայկական բնության նկարագրության մեջ, ուր նա հանդես է գալիս թե՛ իբրև բանաստեղծ և թե՛ իբրև փիլիսոփա: Տեղեր կան, ուր կարծեք թե բնությունը առնում է նրա ձեռքից գրիշը և ինքն է պատկերում բնության եղանակներն ու տեսաբանները: Աբովյանի ձմեռվա բուքի, ամառվա տապի և բնության այլ նկարագրեները կարդալիս, մարդ զգում է իր վրա նրանց շունչը, զգում է սարերի սառը բուքը, ձորերի ալրող տապը, ռոտքերի տակ կարծեք զգում և ճոճռան ճյունը ու «Հազար տեղից ւացի լուս», Հազար տեղից ձնի բուլա» կախ են լինում գլխավերեկում:

Աբովյանը վարպետ պեյզաժիստ է: Նրա ամենաթանկագին կտավները պեյզաժի բաժնում վերաբերում են Հայաստանի ձմռանը, այսինքն, այն պեյզաժին, որն ամենից շատ բնութագրական է և տիպիկական մեր հայկական բնաշխարհի համար: Աերը դեպի

Հարազատ բնությունը Աբովյանի մոտ միաձւվվում էր ղեպի իր երկրի մարդիկ (անկախ ազգությունից) ունեցած նրա վառ ձրգուման հետ, մանավանդ դեպի Հայ և այլազգի պատանիները, որոնց վրա նա նայում էր որպես իր գաղափարների ապագա կրողների վրա:

Ուշալիստ վարպետի գրչով Աբովյանը պատկերում է նաև XIX դարի առաջին կեսի Հայ նահապետական գյուղի կենցաղը, սովորույթները, անգամ մարդկանց տնացին գործածության իրերը, հագուստները, անձերին, իրերը:

Մի նկարիչ դիմում է իրունին, Հարցնելով. «Ասացե՞ք, ինչո՞վ բացատրել, որ ձեր կողմից գրված բոլոր բաները այդպես վառ են, գոնագեղ, իսկ ինձ մոտ միշտ այնպես գոնատ է ստացվում»: Իրսենը իր Հերթին հարցնում է. «Խոկ, ասացե՞ք, կկարողանայի՞ք դուք նկարել Հեմա ձեր սենյակի պատերին նկարված նախշերը, ուր դուք անց եք կացնուք ձեր կյանքի մեծ մասը»: «Ո՛չ», — պատասխանում է նրան նկարիչը: «Ահա և ձեր Հարցի բացատրությունը. դուք չեք կարողանում տեսնել» (ընդգծումը մերն է: — Հ. Դ.), — ասում է իրսենը:

Աբովյանը կարողացել է տեսնել և այդ աեսածը վերաբուղբել գունեղ ներկերով:

«Թրողը, — ասում է Գորկին, — իրավունք ունի՝ վերցնելով իր հետազոտած անձերի որևէ հատկությունը, խորացնել, լայնացնել այն, հաղորդել նրան սրություն և վառ գույն (յրկօշե)... ճշմարիտ արվեստը իրավունք ունի շափազանցելու»:

Դրական հերոսների կողքին նույնը կարելի է ասել նաև նկարագրվող երեսությների, դեպքերի, իրերի, առարկաների մասին:

Դրողն իր երկերի միջոցով կյանքը ցուց է տալիս կարծիք խոշորացուցի միջից: Դրա շնորհիվ այս կամ այն երեսութի, այս կամ այն անձի ու իրի համար հատկանշական գծերը, որոնք հաճախ ունեալ կյանքում աննկատ են մնում, այդ գծերը գրովի ստեղծած կերպարում, նրա նկարագրած երեսութի կամ իրի մեջ բոլորի աշքի առաջ հանդիս են գալիս իրենց ամբողջ պարզությամբ և որոշությամբ: Լ. Տոլստոյն ասել է, թե՝ գեղարվեստագետի տաղանդը կայանում է նրա՝ այս կամ այն առարկայի վրա ուժեղացված, լարված ուշադրություն դարձնելու ընդունակության մեջ: Այդպիսի

ընդունակությամբ օժտված մարդն իր դիտած առարկաների մեջ տեսնում է ինչ-որ նոր, այնպիսի բան, ինչ չեն տեսնում ուղիղները: Իրոք, մեծ գեղագիտները այս կամ այն երկուցին, այս կամ այն անձի մեջ տեսնում են բաներ, որոնք սովորական մարդիկ չեն տեսնում. ավելին: Նրանք իրենց տեսածն ու դիտածը խտացնում են միևնույն մարդու մեջ:

Իրոք, Գոնչարովը իրականության մեջ երեք շի հետազոտի մի այնպիսի մարդու, որի մոտ ծովության հակումն արտահայտված լիներ այն աստիճանի, ինչպես Օքլոմովի մոտ, որի անգամ հողաթափները հարսմարեցրած էին այնպես, որպեսզի նա անկողնից վեր կենալիս նեղություն չկրեր նրանք հազնելու համար: Հեխովն իրականության մեջ երեք շի հանդիպել մի այնպիսի մարդու, որի մոտ կլանքից թաքուն ապրելու ճիպերը դրսեորդիեն այնպիսի չափերով, ինչպես նրա պատյանավոր մարդու մոտ: Ծիրավանդադեն կյանքում երեք չի հետազոտել այնպիսի մարդու, որի մոտ ժամանակամն ու կծծիությունը դրսեորդիեր այն աստիճանի, որ նա շուկա գնալիս իր հետ համարել պատրաստծ երկաթա տղակ վերցներ և ժիայն այն ձվերը գներ, որոնք այդ օղակով շին անցկենա:

Հայ նոր գրականության երկերի վերլուծման ժամանակ սովորողները լսում են և իրենք էլ գործադրում են կլասիֆիկացիամ, ուժմանափակմ, սենտիմենտալիզմ, ունալիզմ, սիմվոլիզմ և այլ տերմինները: Ռառուցի խնդիրն է՝ սովորողներին ըմբռնել տալ այդ տերմինների հասկացողությունը; պարզաբանել գրական ուղղությունների էությունը և նրանց՝ մեկը մյուսին հաջորդելու օրինաշափ և անհրաժեշտ լինելը:

Գրական յուրաքանչյուր սովորության էական առանձնահատկությունները վեր պետք է հանվեն գրական կոնկրետ երկերի հիման վրա: Եթե, մանավանդ, գրական մի ուղղություն հաղթահարելով գրովն անցնում է գրական մի այլ նոր ուղղության, կամ ընդգրկում է իր ստեղծագործության մեջ տարբեր ուղղություններ, այն ժամանակ ալդ երևութիւն ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում, և, բնական է, ավելի լուրջ ուշադրություն է պահանջում:

Ընդհանրապես XIX դարի գրական նյութի վրա ավելի հաճախ է դրվում ուժմանափակմից ունալիզմին անցնելու հարցը: Ռուսական գրականության մեջ այդպես է եղել, օրինակ, Պուշկինի և Լերմոնտովի, Գորդովի և Տուրգենևիի, Նեկրասովի և այլոց հետ: Հայ գրա-

կանության մեջ Արտվյանի մոտ, ինչպես ասել ենք, կան և ոռ-  
մանտիզմի, և ռեալիզմի տարրերը: Ավելին: Նրա վեպով ոչ միայն  
սենաֆմենտալիզմն է զգալ տալիս իրեն (Աղասու կերպարում  
առանձնապես), այլև նկատելի է, որ Արտվյանը գեպի ռոմանտիզմն  
ու ռեալիզմը դալիս է կլասիցիզմի դժվարությունները հաղթահա-  
րելով:

\* \* \*

Այժմ խոսենք ընդհանրապես գրական-գեղարվեստական եր-  
երի և մասնավորապես Արտվյանի «Վերը Հայաստանի»-ի գաղա-  
փարական բովանդակության հարցի մասին:

Դեպի իր պատկերած իրականությունը գրողն իր գաղափարա-  
կան վերաբերմունքը զգունորում է իր ստեղծած կերպարների, ա-  
մենից ավելի՝ իր երկի գիտավոր հերոսի միջոցով:

Գրողի՝ իրականության նկատմամբ դրսեորած այդ գաղափա-  
րական վերաբերմունքը հիմնականում որոշվում է նրանով, թե  
ինչպիսի գասակարգի կամ սոցիալական խմբավորման հետ է  
կապված նա, գասակարգացին ինչպիսի՝ տեսանկյունով է նայում  
նա կյանքին: Գորկին ասում է. «Գրովը դասակարգի աշքն է, ա-  
կանչը, նրա ձայնը»: Գրովը կարող է չգիտակցել, անգամ ժիանել  
այդ, բայց նա չի կարող խոսափել որոշ դասակարգի «օրգանը»,  
նրա ոգպայարանը» («ԿԿԵՏԵԱԼՈՊՈՅ») լինելուց:

Տարբեր գասակարգերի և սոցիալական տարբեր խմբավորում-  
ների նկայացուցիչները՝ կալվածատերը, վաշխառուն, վաճա-  
ռականը, ֆաբրիկանտը, բանվորը, զյուլացին, մանր չինովնիկը և  
այլն՝ գասարակական արտադրության պրոցեսում տարբեր գեր և  
տեղ ունեն, նյութական տարբեր պայմաններ ու կարիքներ, տար-  
բեր ձգտումներ և շահեր, տարբեր զգացմունքներ և ձաշակ ու-  
նեն, տարբեր կերպ են նայում կյանքին և տարբեր տեսակետնե-  
րից գնահատում կյանքի երևույթները: Իրականության միենալոյն  
փաստերը տարբեր գրողների մոտ բոլորովին տարբեր լուսարա-  
նում կարող են ստանալ:

Մակայն, գրականության դասակարգալին բնույթը շպետք է  
հասկանալ ծայրածեղ հասարակության ձևով, ինչպես վուլգար սո-  
ցիուլտաները, Յուլաբանը գրող, եթե նա աղնվորեն ձգտում է  
իր ստեղծագործության մեջ հավատարիմ լինել իրականությանը,  
կարող է երբեմն նույնիսկ իր կամքից անկախ հաղթահարել ու  
վանել իրենից իր գասակարգի աշխարհը ըմբռնման սահմանափա-

կությունը: Էնգելսի բնութագրմամբ, Բալզակը որպես մեծ գեղադես և որպես մեծ ռեալիստ, հարկադրված էր իր սեփական դասակարգի համակրանքներին և քաղաքական նախապաշարմունքներին ընդդիմադիր ընթացք բռնել: Անկախ իր կամքից, նա մերկացրել ու խարազանածեծ է արել իր սիրած դասակարգին՝ ֆրանսիական բուրժուազիային:

Մեծ գրողները սովորաբար լինում են ոչ միայն մեծ մտքի, այլև մեծ սրտի տեր մարդիկ: Աչա թե ինչու նրանք հաճախ, Գորկու պատկերավոր արտահայտությամբ, վեր էին ածվում իրենց դասակարգի հերձվածողների, սկսում էին բննադատորեն նայել նրա կուլտուրայի, իդեոլոգիայի վրա, և չնայած զեռևս չեին կարողանում տեսնել իրականությունը այն խսկական լուսի մեջ, ինչպիսի լուսի մեջ տեսնում է այդ իրականությունը մատերիալստական, մարքսիստական-լենինյան աշխարհայացք ունեցող գրողը, բայց և այնպես մի որոշ շափով նրանք դառնում չեին ժողովրդական մասսաների ազատագրական ձգտումների արտահայտիչները:

Աբովյանի էսթետիկայում մի բարձր ու արժեքավոր գիծ կադա նրա ստեղծագործության բարձր գաղափարականության խնդիրն է, ըստ որում նա պահանջում էր գրականությունը հնաթարկել կյանքին, հասարակ ժողովրդի շահերին, որպեսզի այդ ձանապարհով արվեստը կարողանար դատավճիռ կարդալ իրականության գլխին, իսկ ինքը դառնար այդ դատավճիռն ազգարարութանեղ դատավորը: Ունենալով այդպիսի միտում, նա պետք է լիներ քարոզիչ, խոսքի ուժով մասսաներին ոտքի հաներ տիրության գել:

Հայաստանը հեծում էր պարսկական բռնակալական ուժիմի ներքո, նրա և՛ Փիզիկական գոյությունն էր վտանգված, և՛ կուպարան: Գրաբարը՝ միջնադարյան կղերա-ֆեոդալական իրավակարգից մնացած այդ բեկորը «բիովել էր» խոսքի մարդկանց լեզուն: Աբովյանն իր երկով քարոզեց Հայաստանի ազատագրության գաղափարը պարսկական տիրապետությունից և ոռասական տիրապետության ընդունումը, տնտեսական և քաղաքական ազատագրության հետ միասին նա քարոզեց ազգային կուլտուրական վերածնություն և ազգային ինքնուրունություն, դրա համար առաջքաշելով նոր, աշխարհիկ գրականության և աշխարհաբար լեզվի տիրապետության անհրաժեշտության հարցը:

Այս է Աբովյանի «Վերը Հայաստանի» վեպի գաղափարական

բովանդակությունը: Մի փոքր ավելի կանգ առնենք Արովյանի պիտի այս կողմի վրա: Արովյանը առաջ է քաշում ազատ ու անկախ հայ ինքնուրույն պետականության ինդիրը և եթե ընդունում է սուսական օրիենտացիան, «դա ժամանակավոր նահանջ է, — ինչպես ասում է ակ. Ա. Տերտերյանը, — որպեսզի հետո հնարավոր ժիմի ձիշտ աելին ու ժամանակին հարձակում սկսել ընդհանրապես բռնության ու ստրկացման գեմ»: Եթեև գրող և իբրև քաղաքացի, Արովյանը նրբեք չէր կարող տանել ցարական ուժիմը և իր ազգակիցներին պալքարի կոչ էր անում՝ ընդգեմ սուսական ինքնակալ միապետության: «Խուաների բարի ոտք մեր աշխարհցը չկարի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թերթի տակին գորանա, մեծանա, զարգերը մոռանա ու էլ ետ՝ իր առաջին փառքին հասնի», — ասում է նա\*:

Ասիական բռնակալության՝ Հայաստանում կատարած ավերածությունները դեռևս չեն վերացված: Արովյանը իր երկում հարց է տալիս իր ազգակիցներին, թե՝ «հմիկ հավատո՞ւմ ես, այ իմ խեղճ ազգ, թե քո երկրում բյուր էսպիս քաղաք՝ կամ կրակով փշացան, կամ սուրբ քաշվեցին, ու քեզ չոր քարերը մենակ թողեցին, որ տեսնիս ու լաս, տաս քո գլխիդ վայ, խելքդ ժողովես, լինիս կարիճ հայ, սուսաց հզոր քաջ ձեռի տակին փոքր դինջանաս ու քո աշխարքին մուղալիթ կենաս, արյունդ թափես»\*\*:

Աչքի առաջ էին նաև եվրոպացի նվաճողների կտտարած ավերածությունները Ամերիկայում: Արովյանը շատ լավ էր ըմբռնում այդ պետությունների նվաճողական քաղաքականության էությունը. նա շատ շուռ կանխաղքաց, որ սուսական ցարիզմը ժամանակավորապես միայն (իր տիրապետության առաջին շրջանում) կարող էր գուրգուրալ հայերի վրա, նրա տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացմանն օժանդակել. նա չէր կարող մինչև վերջ թագցնել նվաճողի իր արյունկզակ դեմքը:

Աչա թե ինչու Արովյանը ցանկանում էր իր ազգի վերակենդանության ու անկախության ուղիներն ու միջոցները սովորեցնել իր սաներին և զինել նրանց այդ գործի համար: «Հարիր աղքատ երեխայի ձեռքից բռնեմ, ինչ զիտեմ նրանց սովորեցնեմ, նրանց սիրտն ու հոգին բանամ, իմ սրտի բոլոր դարդերը մեջն ածեմ, ազգին ինչ դեղ է հարկավոր, նրանց տամ, գեղեր քաղաքներ ու-

\* Խ. Արովյան, «Վ. Հայաստանի», Հայկետըտա, Երևան, 1939 թ., էջ 135.

\*\* Նույն տեղ, էջ 187:

դարձեմ, որ զնան իրենց բարի սերմը մեր բարի ազգի Երևխեքանց սրտումը ցանեն, նրանց էրված սիրաը հովացնեն, բերանները լեզու դնեն, սրտներումը զվաթ, որ համողը նրանց գլխին շտա, ինչպես մինչև օրա տվել են, ու հետո, աշխատ գերեզման մտնիմ, հետո աշխատի խփեմ, հոգիս հովանա, մարմինս դինջինա»:

Հասնողը տվել էր հայ ազգի գլխին: Նրա գլխովն անցել էին ասորեստանցիք, պարսիկները, արաբները, թաթարները, թյուրքերը, կրկին պարսիկները, և այժմ ոռուական ցարիզմն էր եկել: Աբովյանը շատ լավ գիտեր, որ նրանք էլ շուտով, շատ շուտով պիտի խփեին հայ ազգի գլխին: Ահա թե ինչի համար էր նա ուղում «Հայ երեխանների սրտում զվար և բերաններում լեզու դնել» (ընդգծումը մերն է: — Հ. Գ.):

Ազգի վերածնության և անկախության հիմունքներից մեկը համարելով մայրենի լեզուն, Աբովյանն իր վեպում ասում է. «Դուք քո լեզուն որ իստակ խոսաս, ի՞նչ վնաս ունի, հենց գիտում ես, խելքի ձեռքիցդ կառնեն, թե սովորած իմաստությունդ շուրը կթափի, կամ թե չէ տերության սիրտն ես ուզում շահել: Բարեխնամ տերությունը ե՞րբ կուզի՝ որ մարդ իրան լեզուն կտրի, իր ազգից հեռանա»\*:

Աբովյանը պայքարում էր գրական մաքուր լեզվի համար, Գրաբարի, հին գրականության, կլասիցիզմի զեմ ըմբռուտանալով, Աբովյանը վերջին հաշվով ըմբռուտանում էր այն միապետության զեմ, որն այդ բոլորը մտրակով ու կախաղանով էր պաշտպանում:

Ռուսական ցարիզմի ազգահայտ քաղաքականությունը բռնորդի հայտնի էր: Որպեսզի իր այս քարոզը հակագետական քայլ շհամարի, Աբովյանը դիմում է եղոպոյան լեզվին: Ավելին: նա դիմում է նորքը քաղաքագիտական պրիոնների. «Այլ եվրոպացիր Ամերիկա ավելիցին, հողի հավասարեցին, ուումք Հայաստանի կանքնեցին ու ասիացոց բիրու, գաղան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին» («Երկեր», հատ. 1-ին էջ 209): Ժողովրդական առածն ասում է՝ «Հայ'ս, քեզ ասում եմ, սկեսուր, զու հասկացիր»: Աբովյանը դատապարտում էր եվրոպացոց Ամերիկայում կատարած գաղանությունները, հակադրելով նրանց ուսներին, որպեսզի վերջիններս մարդասիրաբար վարվեին իրենց նմանած ժողովուրդների հետ և չդիմեին այնպիսի միջոցների, ինչ-

\* Խ. Աբովյան, «Վերը Հայաստանի», Հայոցեանքատ, Երևան, 1939 թ., էջ 80:

պիսի միջոցներիւղիմում էին ևվրոպացիք ամերիկացիների նկատմամբ:

Այս բոլորը գերազանցապես պատմական մանելըներ հն. ուստաների տիրապետության տակ Համեմատաբար ալիքի ազատշունչ քաշելով, «ռուաց հզոր քաջ ձեռքի տակին փոքր դինջանարուց հետո, անհրաժեշտ էր, որպեսզի հայր իր «արյանք քափե, իր ազգը պահեր, իւեն անոն հարեր»: (Ընդգծումը մերի է: — Հ. Դ.):

Աբովյանը կողմնակից էր անընդհատ պայքարի՝ բոլոր տևակի տիրապետությունների դեմ, երբ նրանք խանգարում են Հայազգի վերածնությանը, նրա ինքնուրույն ու անկախ պետականությունը:

Հայ ազգի լիակատար ազատության և անկախության քարոզնէ, որ կազմում է Աբովյանի հոչակավոր «Վերք Հայաստանի»-ի գաղափարական բովանդակությունը:

Երկի գաղափարական բովանդակության հարցը ամենաճիշճական հարցն է տվյալ երկի վերլուծման պրոցեսի մեջ: Գրականության դասատուն պետք է կարողանա ճիշտ կերպով վեր հանել այն և ճիշտ գնահատական տալ նրան: Մինչդեռ մենք ունենք շատ դասատուներ, որոնք չեն կարողանում պարզ պատկերացնել իրենց և նույնպիսի պատկերացում տալ սովորողներին այս կամ այն երկի գաղափարական բովանդակության մասին: Պատահել է ինձ լսել զասիր, երբ և՛ խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, և՛ «Ասք հգորի զորագնդի մասին» երկը, և՛ Մուրացանի «Գևորգ Մարդաբետունի»-ն անցնելիս միատեսակ ձեռվ և միհնույն բառերով հայտարարել են, թե տվյալ երկերի հեղինակների և նրանց գլխավոր հերոսների հայրենասիրությունն է, որ կազմում է այդ երկերի գաղափարական բովանդակությունը: Չի կարելի Ժխուել որ նշված երկերի հեղինակները և նրանց կերտած գլխավոր կերպարները, իրոք, եղել են հայրենասիր, հայրենիքի ազատությունն ու անկախությունն են գովերգել, նրա համար պայքարել, սակայն այդպիսի ընդհանուր բառերով չեն կարելի վեր հանել այդ երկերի գաղափարական բովանդակությունը:

Այդ տեսակետից վերին աստիճանի ուսանելի կարելի է համարել ընկ. Վ. Եսայանի փորձը: Ես լսեցի նրա զասը (8-րդ դասարանում), «Ասք հգորի զորագնդի մասին» երկի վերլուծման ժամանակ. և՛ իր ներածական լեկցիայում, և՛ աշակերտներին հարցնելիս նա հիանալիորեն վեր հանեց և արժեքավորեց «Ասք»-ի գաղափարական բովանդակությունը: Ավելին: Այդ ուղղությամբ

նա զուգահեռներ անցկացրեց Հոմերոսի «Իլիական»-ի, Շ. Ռուս-  
թավելու «Վագրենավոր»-ի և «Ասք»-ի միջև: Խոսելով իշխան Իգո-  
րի հայրենասիրության, քաջության և արիության մասին, խոսելով  
իշխան Սվյատոսլավի կոչի մասին, և այս ձևով նախագաղաքա-  
տելով նրանց երկի գաղափարական բովանդակությունն ըմբռնե-  
լուն, ընկ. Վ. Եսայանը իր խոսքերն այդ մասին ամփոփեց այս-  
պես: «Մը Ի, այսպիսով, «Ասք»-ի հիմնական գաղափարը: Ես  
ձեզ արդեն մի շաբթ անգամներ ասել եմ, որ գեղարվեստական  
Երկի վերլուծման մեջ առաջնակարգ տեղ է գրավում նրա գաղա-  
փարական բովանդակության հարցը: «Ասք»-ի հիմնական գաղա-  
փարական բովանդակությունը ոռուական միասնական կենտրոնա-  
կան իշխանություն ստեղծելու անհրաժեշտության գաղափարն էր:  
Այդ միևնուն գաղափարական բովանդակությունն ունեն, ինչպես  
մենք տեսանք, Հոմերոսի «Իլիական»-ը, Շ. Ռուսթավելու «Վագրե-  
նավոր»-ը:

«Ասք»-ի հեղինակը գարգացնում է այն տեսակետը, որ  
պոլովցիներին դիմադրելու և հազթելու համար անհրաժեշտ  
է ոռուական իշխանների միաբանումը՝ ոռուական անջատ-  
անջատ իշխանությունների միաձուլումը և մի միասնական  
կենտրոնական հզոր պետության ստեղծումը: Այդ տեսակետից  
ենելով, պիտի ամենք, որ «Ասք»-ի հեղինակի գաղափարակիրը ոչ  
թե իշխան Իգորն է, այլ իշխան Սվյատոսլավը, որի կոչը միաբա-  
նության հզոր կոչ է: Բայ Սվյատոսլավի, իշխանների միաբանու-  
մը՝ միացած մյուս իշխանների և ոռու ժողովրդի քաջության, խի-  
զախության հետ՝ հայրենիքը կամրապնդի և կապահովի օտար-  
երկրյա նվաճողների հարձակումներից: Այս գաղափարը արտա-  
հայտված է գեղեցիկ պատկերների, հաջող համեմատությունների, հիպերբռլայի և բնության անձնավորումների միջոցով:

Այնուհետև գասատուն անցնում է երկի վերլուծման մյուս  
խնդիրներին: Ինչպես տեսնում ենք, նա միանդամայն ձիշտ զրեց  
խնդիրը, բայց անհրաժեշտ էր այդ բոլորի հետ միաւին վկայա-  
կուել Կ. Մարքսին, բայ որի „Смысл поэмы—призыв русских  
князей к единению как раз перед нашествием монголов“.\*  
Ընկ. Վ. Եսայանին, անշուշտ, ծանոթ պիտի լինեին այս տողերը,  
և իր բացատրությունները տալիս նա պետք է հիշատակեր, որ դա  
Մարքսի բնորոշումն է:

\* Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, «Երկեր», ռուս. հրատ., Պետհր., Մ.—Լ., 1929 թ.,  
համ. 22, էջ 122:

Չժոռանանք ասել, որ ընկ. վ. Եսայանը «Ասք»-ը վերլուծելիս միանդամայն ձիշտ պարզաբանում տվեց նաև այն հարցին, թե այդ կրկում պատմական ի՞նչպիսի իրականություն է իր արտացոլումը գտել, ի՞նչպիսին է «Ասք»-ի հեղինակի աշխարհայացքը, ի՞նչպիսի տիպական կերպարներ է նա ստեղծել, ի՞նչպիսի դեր է խաղացել «Ասք»-ը հասարակական պրակտիկայում և այլն, և այլն:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկի գաղափարական բովանդակությունը գրողը զրակորում է իր ստեղծած կերպարների, տիպերի միջոցով։ Այդ կերպարները երկու հանդես են գալիս որպես հեղինակի և նրա զասակարգային խմբակցության կամ հակառակորդ գասակարգերի ու սոցիալական խմբակցության այս կամ այն գաղափարական շահերի արտահայտիչներ, նրանց բարոյական այս կամ այն զատկությունները դրսեփորողներ։ «Կերպարը դա անձնավորության վերածված իդեան է», — ասում է Բալզակը։ Այսպես, օրինակ, Արովանի Աղասին խտացնում է իր մեջ Արովանի արտահայտած գաղափարները կյանքի զանազան հարցերի մասին։

Գրական երկերի կենտրոնում ընկած են այդ կերպարները, որոնց մեջ գրողը ցուց է տալիս իր դիտած և տեսած ժարդկային հատկությունները և միաժամանակ բացահայտում է իր վերաբերմունքը գեպի այդ հատկությունները։

Մարդկային բնավորությունների մեջ գրողը բացահայտում է նրանց համար առաջնակարգ, գլխավոր գծերը, գծեր, որոնք իրենց կնիքն են դնում այդ բնավորությունների մնացած բոլոր գծերի վրա։ Գրողի ստեղծած յուրաքանչյուր տիպ իր մեջ կինտրոնացնում-խտացնում է իր ժամանակի և միջավայրի, իր դասակարգացին խմբակցության պատկանող մարդկանց համար հատկանշական գծերը։ Զպետք է պատկերացնել, սակայն, որ գրական տիպի մեջ շատերի համար ընդհանուր այդ գծերի մեխանիկական մի հավաքածու է դրված լինում։ ո՛չ այդ շատերի համար էական, հատկանշական գծերն են միայն, որ խտացվում են այդ տիպերի մեջ, գծեր, որոնք բնորոշում, հատկանշում են այդ դասակարգին կամ խմբակցությանը։ Գրողի շնորհքը կայանում է հենց այն բանի մեջ, որպեսզի նա կարողանա «որսալ» այդ հատկանշակա-

ԱՅ. Հաստ Գորկու Հերոսի խարակտերը որոշակի սոցիալական խմբավորման պատկանող զանազան մարդկանցից վերցրած բազմաթիվ առանձին գծերից է կազմվում:

Ռուս մեծ քննադատ Դոբրոլուբովն ասում էր, թէ՝ «Փիլիպոսի այցող մտքի մեծությունը և բանաստեղծական հանձնարի մեծությունը հավասարապես նրանում են կայանում, որպեսզի առարկայի վրա նետած մի հայացքով կարողանան միանգամից տարբերել նրա էական հատկանիշները՝ նրա պատահական հատկանիշներից»: Այսպես, օրինակ, Գոնչարովի Օբլոմովի կերպարի, նրա բնավորության համար՝ որպես մահացող կալվածատիրական գասակարդի ներկայացուցի համար՝ ամենից հատկանշականը նրա ծովությունն ու անտարբերությունն է, նրա հասարակական ապատիան ու ինդիֆերենտիզմը, և այդ քանը հեղինակը կարողացել է իր հերոսի մեջ՝ որպես տիպի մեջ՝ վեր հանել մեծ վարպետությամբ: Ն. Ստարովսկու հերոս Պավել Կորչագինի համար՝ որպես մեր ժամանակի հերոսի, որպես նոր, սոցիալիստական մարդու կերպարի համար՝ հատկանշական են այնպիսի գծեր, որոնք ստացնյան էպոփայի մարդկանց լավագույն ներկայացուցիչների մոտ միայն կարող են զարգանալ, գծեր, որոնք բանվոր դաստակարդի և կոմունիստական պարտիայի սուուցած ու աճեցրած մարդիկ միայն կարող են ունենալ: Դա բոլշևիկյան բարձր գաղափարականությունն է, որը որոշում է Կորչագինի բնավորության մնացած բոլոր գծերի որպիսությունը: Այդ բարձր գաղափարականությունն է, որ սուունդ է տալիս նրանում աճող սոցիալիստական հայրենասիրությանն ու սոցիալիստական հումանիզմին, բոլշևիկյան կենսասիրությանն ու լավատեսությանը, կայունությանն ու համառության՝ դրած իդեալին հասնելու զործում, նպատակասլացությանն ու ձեռներեցությանը, աշխատասիրությանն ու կոլեկտիվիզմին և այլն, և այլն:

Կերպարների ստեղծման մեջ ամենից կարևորն այն է, որպես գրողը կարողանա նրանց բնավորության միջոցով բացահայտել կանքի զանազան օրինաշափությունները, որոնք իրենք են հենց ձևագորել և ձևավորում այդպիսի և ոչ այլ բնավորություններ, իրենք են սահմանում այդ հերոսների համար այդպիսի և ոչ այլ ձևականագիր և միջակներ: Ուրիշ խոսքով, ենդեւսի պահանջի համաձայն, գրողը պետք է կարողանա իր հերոսների համար մտածել և երևակայությամբ ստեղծել այնպիսի իրադրություն, որը բացահայտի բնթերցողի համար հերոսի բնավորությունը և նրա

բնավորության գանազան գծերը, այլ խոսքով, նա պետք է կարողանա ստեղծել «տիպական հանգամանքներ, տիպական խարակտերների համար»:

Իր հերթին գրականության դասատում պետք է կարողանա բացահայտել սովորողների համար, թե ի՞նչ պայմանների և ինչ հանգամանքների մեջ են ձևավորվել գրական այս և այն հերոսները, օրինակ՝ Օքոմովը, Պավել Վլասովը, Պավել Կորչագինը, Ալ. Ֆադեևը երիտասարդ գվարդիականները, Գևորգ Մարզպետունին, Աննա Սարովյանը, Լևոն Շահյանը, Լևոն Լամբարյանը, Հասմիկ Զուրաբյանը, Մացակ Ավագյանը, Արովյանի Աղասին և այլն, և այլն:

Փորձենք այս նույն պահանջների համապատասխան բացահայտել Արովյանի Աղասու կերպարը: Աղասու կերպարը վեպի կենարոնում է դրված. վեպի այուժեն և նրանից բխող դեմքերն ու գեպքերը Աղասու շորէջն են պտավում ու ծավալվում:

Աղասին հերոսական կերպար է: Իր ամբողջական կերպարի մեջ նա նմանում է հայկական էպոսի՝ «Սասունցի Դավթի» հերոսներին: Հեղինակը նրան նկարագրել է այնպես, ինչպես ժողովուրդն է հեքիաթների ու առասպելների մեջ պատկերում իր սիրած հերոսներին: Արովյանը իր Աղասուն ոչ թե նկարագրել է, այլ պարզապես երգել է նրան: Դա բխում է Արովյանի երկի հերոսական ոգուց:

Իր սոցիալական ծագմամբ Աղասին հասարակ ժողովրդի զավակ է, անգամ՝ աղքատի զավակ: Կանգնած՝ լինելով իր դարի սուաչափոր պատմագիտության դիրքերում, Արովյանը որպես պատմության կերտողներ ընդունում է ոչ թե մեծ մարդկանց, նշանավոր անհատներին, այլ հասարակ ժողովրդին, նրա լավագույն զավակներին, ժողովրդի դատի պաշտպանությունը նա հանձնում է նրա քաջարի զավակներին: Արովյանը ինքը մեզ բացատրում է, թե ինչու է Աղասուն ընտրել որպես իր վեպի հերոս. «Մեկ բարեկենդանի, աշակերտներս որ բաց թողի, սկսեցի ինչ որ երեխությունից լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկալ, նրա հետ հարիր հայի բաշ տղերք էլ իրենց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին, որ իրենց ոտք գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ զեռ չլա սաղ սալամաթի փառք աստծո՝ Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին դուբրան: Ասեցի՝ կեղծություն շանհմ, նրան ընտրեցին»:

Այստեղ էլ Սրբվանը հանդես է գալիս որպես նովատոր. իլ\* ընտրած պատմական ժանրի և հետևաբար պատմական կյանքի մեջ նա զերակատարներ է դարձել հասարակ մարդկանց և ոչ թե վերնախավի մարդկանց՝ թագավորներին, իշխաններին, սեպուներին, դրանիկներին:

Աղասին ամենից առաջ քաջ հայրենասերի տիպար է: Սիրելով իր հայրենիքն ու ժողովորդը, նա վտանգի է ենթարկում ոչ միայն իր կյանքը, այլև իր ընտանիքը: Հանձին Աղասու, մեր աշխերի առաջ մարդնանում են հայ աղատասեր ժողովրդի ձգտումներն ու ցանկությունները: Աղասին խաղաղ կյանքի կողմնակից է, բայց ամեն անդամ արդար կովի է գուրս գալիս, եթե թշնամին ոտնաշարում է իր երկրի ու ժողովրդի աղատությունն ու պատիվը: Նա իր քաջերի խմբով մարտնչում է օտարերկրյա բռնակալների գեմ, նա կովով փրկում է տասնյակ ու հարյուրավոր տառապյաչ վերիների: Քաջության հետ մեկտեղ նա լցված է մեծահոգությամբ: Այս ճշմարտության պաշտպան է, ժողովրդական արդարության համար գլուխը ետ դնող, նա հումանիստ է, անտեղի կերպով ճանձ անդամ շի կոխել, ամեն մի նեղալի օգնության ձեռք է մեկնում: շատ անդամ, եթե նկատում է, որ հարեանի այգին մշակող չկա, ընկերներով գաղտնի մտնում է այնտեղ, ուստիկ-փուսիկ մշակում է ու դուրս գալիս. նա բարության ու համեստության մարմնացումն է. քանի տարեկան է դարձել արքեն, բայց ծնողներին մի թթու խոսք շի ասել երբեք, նրանց ներկայությամբ իր նազուի հետ շի խոսում անդամ: Նահապետական առաքինություններ, որոնք խոտացած են նրա մեջ և բոլոր գյուղացիների ուշադրությունն ու համակրանքն են գրավում: Գյուղացիները շատ էին սիրում նրան, բոլոր մայրերը ցանկանում էին նրան իրենց փեսա շինել, բոլոր նրա արկովն էին ուրախանում, նրա անոնով չօրթում ուստում, նրա գլխովը պահտ գալիս»: անդամ երգեր էին Հորինել նրա վրա և երգում էին:

Աղասին ամենից առաջ մարդու իդեալ է և ապա աղդայիշ հերոս: Որպես այլպիսին, հեղինակը նրանում խտացրել է մարդկային բոլոր ազնիվ ու խելոք հատկանիշները: Նա գեղեցիկ է, խելոք, բարի, համեստ, քաջ, ընկերասեր, խոշում, արդարադատ, կենսափինդ, ուժեղ: Մի խոսքով նա մեր աշքերի առաջ կանգնում է որպես մեկը, որի գոյությունն այդ դարաշրջանում անհասկանալի ու անհավատալի է մնում: Ահա թե ինչու հայ քննադատական գրականության մեջ Աղասին հեղինակի մտքերի ձայնափող է

Համարվում: Աղասու հերոսական դժերը, սակայն, հայ ժողովրդի մեջ առկա էին: Իր հերոսին կերտելիս Արովյանը որոշ իրական դիտողություններ աշքի առաջ ունեցել է, սակայն շբավարարվելով միայն իրականության մեջ եղածով, նա իր իգեալները որոշում էր ոչ միայն իրականի, այլև ցանկալիի, ճեռավորի ոլորտում: Ահա թե ինչու Աղասու կերպարը այնքան հեռացել է իրական-տիպական լինելուց: Սակայն, միհնույն ժամանակ Աղասին այնպիսի հերոս էր, որի մեջ հայ ժողովրդի և նրան կերտող հեղինակի հայացքներն ու ցանկությունները, երազներն ու իդեաները միաձուլվում էին:

Կերպար-անձնավորության ուսումնասիրությունը բարձր դասարանների գրականության պարապմունքների զլիավոր ու էական հարցն է կազմելու: Կերպար-անձնավորության վերլուծման առանձնահատկությունը նրանում է կայանում, որ նա ընդօրինակածան օրեկտ է հանդիսանաւմ. և՛ գրական, և՛ բացասական կերպարները խորը տապավորություն են թնդնում սովորողների վրա: Աւտոմինասիրելով այդ կերպարները, սովորողներն այդ կերպարներից վերցնում են որոշ գծեր, կամ իրենց բնավորության միջից վանում են որոշ գծեր: Կերպարի ուսումնասիրության մեջ այս է հիմնականը: Հետեաբար, մենք պետք է այդ կերպարների ուսումնասիրությունը տանենք այնպես, որպեսզի յուրաքանչյուր կերպարից սովորողները վերցնեն նրանց լավագույն գծերը, և, ընկհակառակը, խուսափին այն ամենից, ինչ մենք դատապարտում ու պայմարակում ենք այդ կերպարների մեջ:

\* \* \*

Այժմ մի քանի խոսք գրական-դեղարվեստական երկի կոմպոզիցիալի մասին:

Գրական երկերի գեղարվեստական արժեքի պրոբլեմը դնելիս, պետք է ենթել այն բանից, թե ի՞նչպիսի կազմակերպվածությամբ ու հետեղականությամբ է հեղինակը բիւհցնում երկի մասը-մասից, մասերն առաջաբանից, վերջաբանը երկի ամբողջությունից. Թե ի՞նչպիսի տեղ են գրավում երկի առանձին մասերն ամբողջի մեջ, կա՞ արդյոք մասերի մեջ համաշափություն, ներդաշնակություն. ի՞նչպես են զարգանում գեղագերը, գեմքերը և այլն:

Գեղարվեստական մեծ հաճույք են պատճառում այն երկերը, որոնք ունեն կուռ կոմպոզիցիա, որոնք բրոնզյա հոյակալ տրաններ են հիշեցնում:

Կոմպոզիցիան նմանեցրել են սանդուխքի, որի մի աստիճանը եթե ընկնի, կխանգարի բարձրանալուն:

Գրական երկի կոմպոզիցիայի մեջ ամենից կարևոր է կերպար-անձնավորությունների կոմպոզիցիան: Կերպար-անձնավորության կոմպոզիցիան տալիս, հեղինակը առաջնորդվում է տարբեր սկզբունքներով: Ջրբեմն երկի հենց սկզբից նա իր հերոսին դուրս է բերում որպես արգեն պատրաստի մարդ, հասարակական մեծ գործ կատարող անձնավորություն և կամ հասարակական շարիք. երբեմն երկի սյուժեամբին առաջընթացի հետ միասին հեղինակը ցուց է տալիս և իր հերոսի աստիճանական զարգացումը և ձևավորումը, պարզաբանում է, թե ինչ պատճառների ազդեցության տակ են փոփոխվում նրա հայացքները, զգացմունքները, բնավորությունը, ճակատագիրը: Այսպես, օրինակ, Շիրվանզադեն իր Վարդան Աշոտյանին հենց մանկությունից դուրս է բերում որպես ազահության ու փողամոլության, ժլատության խտացում, մարմնացնում. Գոնչարովը իր Օբրմովին հենց մանկուց ներկայացնում է մեզ որպես ծովության, ապատիայի մարմնացում, որը նրա հասակի աճման հետ միասին վեր է ածվում հասարակական ինդիֆերենտիզմի. իսկ Գորկին իր «Մայրը» վեպում տալով Պավել Վլասովի կերպարը, զծում է նրա զարդացման ուժին, որպես բանվորական սևոլուցիոն շարժման ղեկավարի, տալիս է նրա աստիճանական «դարձումը» („ՊՈՍՏԵԿԵՆԻԾ ՇՏԱՆՈՎԼԵԿԻԾ“) սևոլուցիոն գործիչ: Արովյանի Աղասուն մենք հանգիպում ենք այն ժամանակ, երբ նա արգեն քան տարեկան է և օժտված է մարդկացին այն բոլոր առաքինություններով, որպիսիք հայ ժողովրդի և նրա լուվագույն մտածողի ու զրոյի իդեալն են կազմում:

Արովյանի երկի կոմպոզիցիայի մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում կոմպոզիցիոն գուգահեռները և հակագրությունները: Իր պատմական վեպում Արովյանն ստեղծել է իրար հակադիր երկու վիճակներ՝ հայ ժողովրդի պայմառ լավատեսությունը գալիքի մասին, որը նա կապում էր ոռւական օրինատացիայի հետ, և ոռւական ցարիզմի բերած քաղաքական բռնությունները, որոնք ամբողջ վեպի մեջ, իբրև կոմպոզիցիոն գուգահեռներ մրցում են իրար հետ և ժողովրդի համար ցանկալի վախճանը թողնում պատմությանը:

Արովյանի վեպը ընդհանրապես վերցրած՝ շունի կուռ կոմպոզիցիա: Հաճախակի շեղումները՝ ծանոթագրությունները և դանա-

զան դիտողությունները խանգարում են նրա ամբողջականությանը: Բալգակի պատկերավոր արտահայտությամբ, Աբովյանը «ծաղիկ քաղելու համար շատ է ճամփից շեղվում»: Գրողի՝ համփին քաղած ծաղիկներն ինչքան էլ գունագեղ, ինչքան էլ հոտավետ լինեն, այնուամենայնիվ, խանգարում են նրա ուղիղ առաջընթացին:

Ճիշտ են դիտել մեր հայ գրականության պատմաբանները՝ Լեռն, Լ. Մանվելյանը, Վ. Փափազյանը, որ Աբովյանի վեպում շատ կան ավելորդաբանություններ, մասերի համաշափությունն ու դեղաբարվեստական ներդաշնակությունը խախտված է: Ինքը Աբովյանը անվերջ ներողություններ է խնդրում ընթերցողից իր շեղումների համար: Նա ինքը դրանք պատճառաբարում է նրանով, որ չի կարող այդ անցքերի կողքով անտարբեր անցնել. այն բանից հետո, երբ գրաբարը, որը «բխովել էր» նրա լեզուն, մի կողմ զնելով, նա իր լեզվի կապերն արձակված է զգում, նրա հույզերն ու տրամադրությունները միանգամից վարարում են դարնան անձրեվի պես, և նա ընթանում է այնպես, ինչպես երաշտից հետո հեղեղն է ընթանում: Այդ տեսակիտից մոտենալով և նկատի առնելով այն հանգամանքը, որ մեզ մոտ գրականության տեսության դիմու առաջին հիմնաքարն էր դնում նա ինքը, մենք պիտք է ներնք նրան: Սակայն մենք չենք կարող բոլորովին հերքել այն փաստը, որ Աբովյանի երկի հիմնական պակասությունը նրա կուպողիցիայի մեջ է:

\* \* \*

Այժմ մի քանի խոսք գրովի ոճի մասին: Գրողին կամ նրա երկն ուսումնասիրելիս պետք է կարողանալ նրա մոտ առանձնացնել այն ամենը, ինչը բնորոշ է նրա ամհատական ոճի համար: Նեկրասովի ոճի բնորոշ կողմերից մեկը նրա պոեզիայի վրա ժողովրդական բանավոր ստեղծագործության խորը ներգործությունն է: Նրա «Ը՞վ է Ռուսիայում լավ ապրում» պոեմի՝ հերոսը ուսւ ժողովուրդն է, և նա՝ այդ ժողովուրդը, պոեմում հանդիս է գալիս ժողովրդական բանավոր ստեղծագործության հարուստ գանձերը իր ձեռքում բարձր պահած: Նույնը մենք կարող ենք ասել Թումանյանի, Աբովյանի և այլոց մասին: Ժողովրդի և ժողովրդական ստեղծագործության հետ մոտիկովթյունը աղքանու գարձակ Աբովյանի ոճի գունագեղության և շքեղության համար: Ժողովրդի խոսակցական լեզվից ենելով, այդ բազայի վրա նա սէփական ոճ է ստեղ-

ծել, իր տրամադրություններն ու հուզերը ընթերցողներին հաղորդելու, փոխանցելու ձևեր ու պրիումներ հորինել: Աբովյանը առանձնապես իր սիրած հերոսներին խոսեցնում է բանաստեղծական շքեղ, ծաղկուն ոճով: Իրեւ օրինակ կարելի է բերել Աղասում մոր մայրական սիրո զեղումների արտահայտման ձեր: Աղասու մայրը նրան ասում է. «Հող կդառնամ, հողս քեզ պտուզ կտա, չուր կկտրվիմ, քո հանդին, ծաղկի վրա կթափվիմ, դրախտումը ովիմ, քո ծառի ճիսկների վրա բլրովի պես կկանգնիմ քեզ անուշ բուն կդնեմ, աշխարքում ատրիմ, ջանս քեզ զուրբան կտամ, թաքդու ծաղկիս, ծլիս, զորանաս, անունիդ մեռնեմ»:

Թողորովին զարմանալի չէ, որ Աբովյանը այսպիսի ոճով է խոսեցնում իր հերոսներին ու հերոսուհիներին: Զէ՞ որ ժողովուրդ-բանաստեղծը ինքը իր էպոսների հերոսներին հաճախ նման պերճափայլ ոճով է խոսեցնում, երբ նրանք ժողովովի բարձր, վեհ, սրբազն զգացմունքների թարգմաններ են հանդիսանում:

Աբովյանի ոճը դինամիկ է: Նրա ոճի այդ կողմը ուժիղ է արտահայտվում հատկապես կոփվների նկարագրի մեջ, այդ նկարագրների վրա եղիշեի շունչն է զգացվում, կռվի որոշ տեսարաններ մեղ հիշեցնում են նրա «Վարդանանց պատերազմը»:

Աբովյանը երբեմն գործ է ածել նաև գրաբարյան փրուն, «բարձր» ոճեր: Զնայած նա երբեմնակի տուրք է տվել Միթիթարյաններին, բայց հիմնականում հակազդվել է նրանց, կրակն ուղղելով արխայիկ ոճի, կլասիցիզմի ձոռոմ, վերամբարձ, փրուն արտահայտությունների դեմ:

\* \* \*

Գրական-գեղարվեստական երկի լեզվի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, թե ինչ շափով այդ երկի հիման վրա կարելի կլինի աշակերտներին լեզու սովորեցնել: Զեխովը այնքան էր հավանում Լերմոնտովի լեզուն, որ գտնում էր, որ նրա երկերը դպրոցում լեզվի ուսուցման ազբյուր կարող են ծառայել: «Ես շգիտեմ, — ասում էր նա, — մի ավելի լավ լեզու, քան Լերմոնտովի նըր»: Այդպիսի լեզու հայ գրականության մեջ մենք կարող ենք համարել Նար-Դոսի, Մուրացանի, Ավ. Խաչակրյանի, Վ. Տերյանի, Գ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի լեզուն:

Գրական-գեղարվեստական երկի լեզուն պետք է դիտել երկակի կողմից: Այստեղ, որտեղ հեղինակն է խոսում, պատմում, մենք պահանջում ենք, որպեսզի երկը լինի զբված մաքուր, անա-

գարտ գրական լեզվով. իսկ այստեղ, որտեղ Հերոսներն են խոսում, նախ և առաջ պետք է հաշվի առնել նրանց ով լինելը և տպա պահանջել այդպիսի լեզվով խօսել: Գորիկին ընդունում էր, որ գրողը կարող է իր հերոսներին խոսեցնել իրենց բարբառով՝ մանավանդ նրանց գիտունների մեջ, սակայն պայմանով, որ այդ բարբառը հղիված ու կոկված լինի:

Աբովյանի գրական գործունեության մեջ հսկա բաժին ունի նույնակես և նրա լեզվաշինարարական հանդունքն փորձը: Նա իր լեզվաշինարարական սկզբունքը կառուցում էր ոչ թե գրաբարի հիմքի, այլ ժողովրդական խոսակցական լեզվի հիմքի վրա, գտնելով, որ նա պետք է մշակվի և ամենքին մատչելի դառնա՞ սնվելով բարբառներից, օտար լեզվից և գրաբարից: Փշելով կղերի ստեղծած գրական և լեզվական շղթաները, իր շոշափած նոր նյութի, նոր, թարմ բովանդակության հետ նա բերում էր և ինքնատիպ, հարուստ, ճոխ լեզվապաշար:

Մինչ կղերն ու կղերամիտները ժողովրդին գիտությունից հետ պահելու համար գրաբարը փակող պարիսպ ծառայեցնելու իրենց վերջին ծիփերն էին լարում, լուսավորական-դեմոկրատ Աբովյանը նոր, աշխարհաբար ժողովրդական լեզվի տիրապետության հարցն էր զնում՝ իր լուսավոր գաղափարները ժողովրդի մտքին ու սրտին հասցնելու համար:

Գրականության բովանդակության գեմոկրատական հեղաշրջման կողքին Աբովյանը զլուխ բերեց նաև լեզվի դեմոկրատիկ հեղաշրջումը: Գրականության գեմոկրատացումը Աբովյանը զրեց իր ժամանակի խոսակցական լեզվի ամուր հիմքի վրա: «Լեռը Հայաստանի»-ի հիմքը կազմում է Արաբատյան բարբառը՝ Քանաքեռի բարբառը, որն Աբովյանը ենթարկել է ստեղծագործական մշակման, շաղարտելով ժողովրդական բարբարի համն ու հույր: Միաժամանակ Աբովյանը մեզ ցուց է տվել օտար լեզուներից օգտվելու օրինակը: Ռուսական լեզվից վերցնելով որոշ բառեր, նա սովորեցնում է մեզ, թե ո՞ր ժամանակ պետք է օգտվել այդ լեզուներից, այն ժամանակ և այնպիսի բառեր, եթե գրանց համարժեքը մեր լեզվում չկա: Ռուսաց լեզվի ուսումնասիրության անհրաժեշտությունը քարոզելով, Աբովյանը նախ և առաջ ցանկանում էր հայ ժողովրդին հաղորդակից դարձնել ուսական նշանավոր գրականությանը և դրանով լիցք տալ հայ նոր գրական լեզվին ու գրականությանը:

Սակայն, գրական նոր լեզվի հիմքը զնելով, Աբովյանը չէր

կարող այն միանգամից կատարյալ դարձնել: Եվ դա բնական էր, քանի որ նա մեր գրական նոր լեզվի անկյունագրան էր դնում դեռևս: Իր գործածած լեզվի մասին նա ինքն ասել է, թե՝ այսօր նա հնչում է որպես թոթովախոսություն, բայց վաղը նա այնպիսին կղառնա, որով հնարավոր կլինի արտահայտել և արամաբանության, և ճարտասանության նրբությունները: Իրոք, այսօրվա մեր գրական հղկված, ջոխ լեզվուն իր սկիզբն առնում է Աբովյանի գործադրած լեզվից:

Ժողովրդական ստեղծագործության հետ մոաթիկությունը աղբյուր դարձավ Աբովյանի լեզվի պայծառության համար, որը իր խորին մատշելիության հետ մեկտեղ հանգես էր բերում մտքի նրբություններն արտահայտելու հնարավորությունները: Աբովյանն ընդունում էր՝ «Ով ժողովրդի պես է խոսում, ժողովրդի սրտի հետ է խոսում» գելիով, դրանով հենց հակադրվելով կղեցին և ցարիցմին:

\* \* \*

Իբենց ստեղծագործած երկերի արտահայտչականությունն է՝ լավելի մեծացնելու, զորկղացնելու համար գրողները գործ են ածում գանազան մակդիրներ, համեմատություններ և ազն: Այսպիսս, օրինակ, Հայերի քաղաքական հացությունը և Հայաստանում պարսից բռնակալությունը պատկերելու համար Աբովյանն աղնապիսի զորեղ համեմատություն է արել, որը սոսկ համեմատություն չէ, այլ մի ամբողջ նկարչական կտավ: Ահա այն. «Հայի թշնամի ուրուրն էլ, թերեր փուած, շանդերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրբելով, կամ դոշը քուշուշելով, երկնքի տակին գլուխը գոշին քաշ զցած, սուր աշքերը էս գիճը, էն գեին էր գցում, պատում հազրիում, որ բիրդանբիր ականթոթափել վեր վազի մնել լզպոր ճտի զլիսի, որ իր մոր թերի տակին, կամ մոր գլուխը քուրելով, թեր քաշելով, ծվծվալով, կտկտալով՝ կամ կտուց կտցի տալով, մոր կրխալւեն, ծվալուն ականչ գնելով, սուս փուս նստում էին իրար հետ, կամ քուշուշ էին անում, կամ մեկ խեղճ անձար լորի քամակի խփի ու ճվճվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քրքրի, թեպոի ու իր ագահ փորին մատաղ անի» («Երկեր», Հատ. I, էջ 83):

Գյուղացիների առտնին կենցաղը, նիստն ու կացը, տնային կամ կարասիները, հաղուսաները նկարագրելիս նույնպես Աբովյա-

Նր գիպուկ համեմատություններ է անում, անփոխարինելի մաթեմատիկան գործ ածում: Այսպես, օրինակ, Հայ գյուղացիների գույնը գույն կտորներով կարկատած արխալուները նա նմանեցնում է շալ կատվի պոչին, Ըազը թափած քուրքերը համեմատում է քուտ ձիու սաղրի հետ կամ բրդահան էլած ուղտի կաշվի հետ և այն: Աբովյանի մակդիրները մեծ մասամբ անփոխարինելի են: Մայրենի լեզվի հարստությունն ու հարազատությունը դրանքությունը համար Աբովյանը այն համեմատում է մոր կարի հետ: Իր հերոսի քաջությունը որակելու համար գործ է ածում Ասլան քալասի մականուրը: Նրա մակդիրները շատ իմաստալից են, խոսուն. ողորմելի Ամերիկա, սովոր լեզու, հանդի ծաղիկ, եփած մարդ, փարի արքայություն» և այլն դարձվածքները իրենց մակդիրներով հանդերձ գարձալ ժողովրդից են դալիս և գրա համար են այդքան պատկերավոր:

\* \*

Համաշխարհային նշանավոր գրողները իրենց լավագույն երկերն ստեղծագործելիս ժողովրդական բանավոր ստեղծագործության անապական ակունքներից են չուր խմել, ժողովրդական ստեղծագործության անսասան հիմքի վրա կառուցելով իրենց գեղարվեստական երկի շինվածքը: Ֆոլկլորի օգտագործումը նրանց ստեղծագործությանը վառ երանգներ է հաղորդել, պայծառ գունագեղությունն, մտքի հարստությունն ու ճկունությունն, խորությունն ու հստակությունն: Պուշկինի մասին պատմում են, թե ինչպես տոն օրերին մուժիկական զգեստներ հագած նա մտել է մուժիկների մեջ և լսել նրանց զրուցները, պատմությունները, հեքիաթները, հավաքել է նրանց գործածած դարձվածքները, առացվածքները, տուածները, հանելուկները: Աբովյանը ֆոլկլորի գնահատման խնդրում հմայված է եղել Պուշկինավ. նա ֆոլկլորի խանդավառն է, նա իր վեպի «Հառաջարան»-ում անդրագառնայով Փոլկլորին, իր միավագն է հայտնում Փոլկլորի հալաքման և օգտագործման մասին, «... էսօր էլ մուրազս հենց են ա էլել, որ գնամ ընկնիմ մեկ իշխանի ոտք, ասեմ, ինձ մի կտոր հաց տա ու ես՝ գիշեր ցերեկ ընկնեմ գեղեցկեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ, գրիմ»: Մեծ դիտողի աշքից չէր կարող վրիպել այն հանգամանքը, որ ժողովրդը շատ է սիրում աշուղներին, որ նա «մեյդանում կամ փողոցում մեկ քոռ աշըղի էնպես Հայիլ մայիլ ականջ էր զնում, փողքաշխում նրան, որ բերանների ջուրը գնում էր»: Ժողովրդին ան-

Հունորեն սիրող ու նվիրված գրողը տենչում էր ժողովրդի սիրելք/ աշուղը գառնալ, ոչ միայն երգել նրա համար, այլև սովորել նրանից, նրա բանավոր բանաստեղծությունից: Աբովյանի վեպի մեջ, այսպես, ինչպես Փոլկլսրի մեջ, ամեն ինչ պարզ ու անմիջական է: Ֆոլկլորի խանդավառը իր հերոսներին նույնական օժանել է Փոլկլորի հերոսների առաքինություններով, հերոսական գծերով: Աբովյանի հերոս-գյուղացիները քահանաներին քննադատելիս, իրենց զայրույթն ու ատելությունը ուժգնորեն արտահայտելու համար մեծ մասամբ հիմնվում են ֆոլկլորի ասացվածքների, առածների ու շուտասելուկների վրա. նա իր հերոսի բերանում գրել է «Մար ու ձոր տերուերի փոր» հայտնի հակակղերական ասացվածքը, «փորի արքայություն» դարձվածքը և այլն:

\* \* \*

Գյական-գեղարվեստական երկերի միջոցով հեղինակը դրսելուում է իր վերաբերմունքը դեպի իրականությունը: Այդ վերաբերմունքը նա կարող է արտահայտել դրական զանազան պրիմուների միջոցով, զանազան ձևերով: Իրականության դրսերման միջոցներից մեկը երգիծանքն է: Ժամանակագրական տեսակետից ամենից ավելի վաղ և ամենից ուժգին կերպով երգիծանքը գործադրել են քննադատական ուսումնականի հետևողները: Երգիծանքն առնասարակ ժողովրդական համարություն զետու զենք է՝ ժողովրդի թշնամիների գեմ: Երգիծանքը կարող է արտահայտվել և՛ հոմորական մեղմ ծիծառով, և՛ սարկաստիկ ոչնչացնող ծաղրով: Տիրող կարգի և կղերի գեմ Աբովյանը և նրա երկի հերոսները՝ գյուղացիները բանեցնում են կծու սարկազմ, իսկ աշխատավոր գյուղացու նկատմամբ՝ բարի, բարեկամական, ուղղող հոմնորը: Բնորոշ է, որ յարական ցենզուրան Աբովյանի երկից չնշել էր այն ամբողջ հատվածը, որը վերջանում է՝ «Էս ի՞նչ բան ա, թե վլավը ես ուտեմ, քո վլիմին զմիեմ, մածունը ես լարստեմ, քեզ գող կատու կանչեմ»: «Այս դարձվածքներում Աբովյանի զյուղացին ներկայացնում է կղերի կեղծ բարեկամական դեմքը, որը ժողովրդին քարոզում էր սակավապետություն և բանջարակերություն, իսկ ինքը իր ամենակեր խոզությամբ խժում էր նրա բաժինը», — իրավացիորեն գրում է ակ. Ա. Տերտերյանը:

Աբովյանի վեպում զգալի տեղ են գտել հիպերբոլիկ պատկերներն ու դարձվածքները: «Վերք Հայաստանի»-ի շափազանցությունները նույնական ժողովրդագործություն կնիքն ու-

նին իրենց վրա. Սարդարի ֆարբաշները թագուհուն առևանդում են, պյուղացիներից «Չատի պողոջները ահու ճաքում, արինը շոռալով գնում է»: Սա հիմերբոլիկ պատկեր է: «Մակայն սրանում իուր հոգեբանական ներքնատեսություն կա: Իր ամենաթափանց հայացքով Աքովյանը կարողացել է տեսնել բոլորի սրտի խորքում կծկված ան ու սարսափին այն բանի հանդեպ, ինչ որ ամեն բոպե կարող էր հանդիպել ամեն մեկին: Տվյալ արտահայտության հիպերբոլզմը արդարացվում է վշտի համատարածությամբ և անձայր լինելով», — ասում է ակ. Ա. Տերտերյանը: Աբովյանի վյուղացին դեպի փողն ունեցած իր նողկանքը և դեպի փողատերերը տածած արգահատանքը միայն այսպիսի հիմերբոլիկ համեմատությամբ կարող էր արտահայտել. «Թեկուզ փողի համն առած՝ թեկուզ իր միսը կերած, հեսաբը մին է»: Նույն արվեստով է կերտված նաև Հայ ժողովրդի մեծագույն էպոսը: Բռնակալ ու շահագործող Մսրա Մելիքների անաշխատ կրանքի մասին գաղափար տալու համար ժողովրդութանաստեղծը հայտարարում է, թե իբր Մսրա Մելիքը յոթ օրով քուն է լինում: Հազարավոր այսպիսի օրինակներ կարելի է բերել ժողովրդուների էպոսներից:

\* \* \*

Երենց երկերի արտահայտչականությունը զորեղացնելու համար գրողները հաճախ օգնության են կանչում բնության երևութները, անձնավորում են բնությունը և նրան վերագրում մարդկանց կենսական քայլերին գործակից լինելու հատկությունները: Բնության տարրերը նրանց երկերում հանդես են գալիս որպես կենդանի, զգացող, գործող արարածներ: Ժողովրդական գրողների մոտ բնությունը միշտ հանդես է գալիս որպես ժողովրդի շահերի պաշտպան, որպես նրա սիրած հերոսների օգնական ու պահապան: Բնությունը միշտ ժողովրդական ծշմարտության աջակիցն է: Սա ևս գալին է ժողովրդների էպոսներից: «Ասք»-ի մեջ բնությունը ուստի հայրենասեր իշխանների պահապանն է Հանդիսանում: Հազարավոր այդպիսի օրինակներ կարելի է բերել ժողովրդների էպոսներից:

Աբովյանի մոտ բնությունը միշտ օժանդակում է Հայերի պատագական կոփվաներին: Հայ ազգի գառնազետ տանջանքների պահին բնությունը նույնպես սպում է նրա հետ. «Յավակից լուսինը՝ տիտոր, զառնավարամ, հենց աշքերը Ապարանի երեսը առավ թի չէ, ել ետ չոքեշոք արևմուտն ա փախչում, որ ականջները կալ-

նի, ևս ողբալի աղաղակը լսի» («Երկեր», Հատ. I, էջ 135):

Բնության սերը և բնության նկարագիրները ժաղավրդական գրողների մոտ տոգործած են լինում խորը ժողովրդայնությամբ: Այդ ժողովրդայնությունը Արովանի մոտ հենց արտահայտվում է այն բանում, որ նա բնությանը նայում է նրա ծոցում կատարվող աշխատանքային պրոցեսների տեսանկումից: «Երա հերոսները,— ասում է ակ. Ա. Տերտերյանը, — միշտ պատրաստ են փարելու մեծ ու անպարփակ, ճարուստ ու հզոր, առատարություն ու հավասարահայաց բնությանը, պատրաստ են տալ նրանց իրենց ուժն ու եռանգը, բեղմնավորել այն իրենց բրտին-քով և փոխարենը ստանալ նրանից անհուն բարիքները»: Աղասին քննադատում է եկեղեցական կեղծ արարողությունները, կրոնական նախապաշտումներն ու սնահավատությունները, ձանձրանում է եկեղեցական արարողություններից և ասում է. «Եմ հանդից ու ծառից ավելի շատ բան եմ սովորում, քան գրանցից»: Արօվանի հերոսները հանդերձալ կյանքի հավատքը ժողովրդի թշնամիների հերցուրանքն են համարում և այս աշխարհում ապրելու, բնության, կյանքի բարիքները վայեկելու անհուն փափառն ունեն:

Արօվանը կենքանացնում, շնչավորում է բնությունը. բնության այս շնչավորումը նույնպես գալիս է ֆոլկլորից:

Արօվանի մոտ բնության պատկերները հերոսների այս կամ այն վիճակի հետ են համապատաճ՝ այդ վիճակները մեկնելու և բացահայտելու համար: Նա մարդկային զգացմունքները թարգմանել է բնության լեզվով, բավական է վերջիշել Աղասու մոթ խոսքերը և Աղասու կող նամակից բերված հատվածը:

«Բուրժուական աշխարհի անասնական էկոփամի, շահույթամոլության թունավորված մթնոլորտում միակ բնությունն էր մնացել անշահասեր, անաղարտ, անկաշառ: Արօվանը իր պատկերած աշխատավոր մարդկանց խորհուրդ էր տալիս այդ գերազանց էակից վերցնել օրինակ, նրանից սովորել կյանքին ու մարդկանց օգտակար լինելու դասեր. նա իր հերոսին ասում է. «Ծափ պես պառզ տուր, ծաղկի պես հոտ, սարի պես ալլցուր, դաշտի պես մասիւ, երկրի պես հաց, երկնքի պես լիս», — զիտում է ակ. Ա. Տերտերյանը:

\* \* \*

Այսպես, կարելի էր դեռևս երկար շարունակել և մեկիկ-մեկիկ կանգ առնել գրական երկի վերլուծման վերաբերյալ զանազան

ինդիրների՝ հանգույցի, կուլմինացիայի էխսպոզիցիայի, ինտրո-  
գայի, կոլիզիայի և այլնի մասին, սակայն նման բրոցը ուրու-  
մենք հնարավորություն չունենք անդրադառնալու այդ բոլոր խըն-  
դիրներին: Մեր նպատակն էր ցուց տալ, թե գրական երկի վեր-  
լուծման ժամանակ ի՞նչ հիմնական խնդիրների վրա պետք է քե-  
զինել ուշադրությունը, և ինչպիսի՞ կարգով ու հաջորդականու-  
թյամբ պետք է քննության առնել այդ խնդիրները:

\* \* \*

Ամփոփելով մեր խոսքը, մենք մեկ անդամ ևս հիշեցնում ենք,  
որ գրականության լավ դասատու լինելու համար բավական չէ  
միայն լավ գիտենալ գրականության պատմությունն ու գրականու-  
թյան տեսությունը, այլ անհրաժեշտ է լավ իմանալ նաև գրակա-  
նության մեթոդիկան: Գրականության մեթոդիկա ասելով շպիտը է  
հասկանալ միայն նրա դասավանդման մեթոդներն ու պրիորները.  
Դա առարկայի նեկա տնայինագործական հասկացողությունն է: Գրա-  
կանության մեթոդիկան իր մեջ ամփոփում է գրականության դա-  
սավանդման խնդիրներն ու նպատակները՝ նրա գերը սովորողների  
կոմունիստական դաստիարակության գործում, նրա նյութը և ապա-  
ռաւուցման այն բոլոր մեթոդներն ու պրիորները, սրոնք պետք են  
նրա դասավանդման համար: Դասատուն ոչ միայն պետք է լավ  
իմանա այդ բոլորը, այլև սերտ կերպով պետք է կապված լինի  
գրական քննադատության հետ, պետք է նրա սեղանի գիրքը  
դառնա „Լիթերատուրա և առօլու“ գումարը:

Գրականության մեթոդիկան սովորեցնում է անդամաճատել  
երկը, վերլուծել իր բաղկացոցից տարրերին, թափանցել յուրա-  
քանչյուր տարրի էության մեջ առանձին-առանձին, քննել այդ  
տարրերը իրենց փոխադարձ կապակցության մեջ, իրեն մի օրգա-  
նական ամբողջություն. նա սովորեցնում է դասատուին՝ զիտական  
ձիշտ պատկերացում տալ սովորողներին երկի գաղափարական  
բովանդակության, գրական ուղղության, ոճի, կոմպոզիցիայի,  
լեզվի և այլ կողմերի մասին:

Ստանձնելով գրականության առարկայի դասավանդումը  
զպրոցում, դասատուն պետք է պարզ պատկերացնի, թե ինչո՞ւ է  
դասավանդում այդ առարկան, ինչ՝ մն են կայանում զպրոցի  
հիմնական խնդիրները ներկա էտապում, և ինչպիսի՞ տեղ է պատ-  
կանում գրականությանը այդ խնդիրների իրագործման ասպարի-  
զում: Աւրիշ խոսքով, գրականության դասատուի համար պարզ

պետք է լինեն գրականության դասավանդման Հիմունքներն ու խնդիրները, որոնք գալիս են սովետական գրականագիտությունից, սովետական մանկավարժությունից ու Հոգեբանությունից և առհասարակ սովետական դիտության արմատական աղբյուրից՝ մարդու կզմ-լենինիզմից:

Դասատուն ո՛չ միայն պետք է տիրապետի ծրագրային նյութին, այլև պետք է լավ իմանա, թե ի՞նչ եղանակներով ու միջոցներով, ի՞նչ մեթոդներով ու պրիումներով պետք է մատուցել այդ նյութը՝ նրա դասավանդման նպատակներն ու խնդիրները մաքսիմալ շափով իրագործելու համար:

Գրական երկերի ուսումնասիրման Հիմնական մեղոթը պետք է լինի ինդուկտիվ մեթոդը, այսինքն, գրական նյութի վրա սովորողների ակտիվ հետազոտական աշխատանքը. պետք է սովորեցնել դպրոցականներին իրենց եղբակացությունները գրական երկի մասին տալ կոնկրետ մատերիալի հետազոտության Հիմնա վրա: Սովետական դպրոցը չի կարող հանդուրժել այսպիսի դրույտուն, որպիսին հազվադեպ չի եղել մինչունկուցիոն շրջանում, երբ աշակերտները գրական-գեղարվեստական երկերի բովանդակությանը և գործող անձերին ծանոթանում էին գրականության դասագրքի միջոցով միայն, առանց ծանոթ լինելու բնագրի հետ: Մեր Հիմնական պահանջը մեր դպրոցականներից պետք է լինի տեքստի Հիմնովին գիտենալը, ինքնուրուցին եղբակացությունների հանգելու կարողության ձեռք բերումը, դրանք բանավոր և գրավոր կերպով չիշտ, հասկանալի շարադրելու կարողությունը: Այս տեսակետից հասուն պահանջ պետք է դառնա տեքստի ամենաբնորոշ, ամենագեղցիկ հատվածներն ու տուները, տողերը անգիր իմանալը:

Այս բոլորը չի ասում, որ գրականության դասերին չպետք է չնշի նաև ուսուցչի վառ, կենդանի խոսքը: Այդ խոսքը պետք է լինի այնպիսին, որ սիստեմի բերի սովորողներին տրվող գիտելիքները, մյուս կողմից նա պետք է գիտականորեն ճիշտ և կազմակերպված խոսքի նմուշ հանդիմանա, որպիսի խոսքի տիրապետմանը պետք է ձգտեն նաև սովորողները:

Ուսուցչի խոսքը կարող է լինել և՛ ներածական, նախապատրաստող, օրինատիրովկայի ենթարկող, և՛ ամփոփող խոսք. երեմն անհրաժեշտ է լինում մեկը կամ մյուսը, երեմն ել երկուսը ևս: Ուսուցչի խոսքի բովանդակությունը կախված է վերլուծան ենթակա երկի առանձնահատկություններից, դրողի ողջ ստեղծագործության մեջ նրա գրաված տեղից:

Ուսուցչի-խոսքի էմոցիոնալ կողմը ներածական լեկցիայի մեջ հատկապես՝ հսկայական գեր է խաղում։ Հուզականությունը գեղարվեստական գրականության հական նշանն է։ Նրա մատուցումը նույնպես պետք է հատկանշվի էմոցիոնալ հագեցվածությամբ։ Մեր լավագույն ուսուցիչների փորձը շատ ապացույցներ է տալիս, թե ինչպիսի նշանակություն ունեն լեկցիայի հաջողության համար ուսուցչի ոչ միայն առարկայական, տեսական և մեթոդական պատրաստությունը, այլև նրա անձնական հատկությունները, անգամ ձայնը և տոնը, իսկ ամենագլխավորը՝ նրա վառ հետաքրքրությունը դեպի գեղարվեստական գրականությունը և դեպի սովորողների կոմոմիստական դաստիարակության գործը։


Գրականության դասատուն սովետական դպրոցում գեղարվեստական գրքի ուսումնամաիրությունը պետք է զնի այնպիսի հիմքի վրա, որ յուրաքանչյուր սովորող գգա Մ. Գորկով՝ այդ մեծ գրողի և գրականագետի հետեւյալ խոսքերի ճշգրտացիությունը՝ «Սիրեցեք գիրքը։ Նա կթեթևացնի ձեր կյանքը, բարեկամաբար կօգնի ձեզ մտքերի, զգացմունքների, դեպքերի խայտաբղետ և փոթորկող շփոթության մեջ, նա կսովորեցնի ձեզ հարգել մարդուն և ինքն իրեն»։

Սոցիալիստական առաջավոր կուլտուրայի ընդդիմ կապիտալիստական աշխարհի ռեակցիոն խավարամիտների մղած կատաղի պայքարի էտապում, երբ իդեոլոգիական ճակատի աշխատողները գտնվում են կրակի առաջավոր գծում, սովետական ուսուցչի, այդ թվում և գրականության ուսուցչի առաջ լուրջ ու պատվավոր խընդիր է դրվագ՝ դաստիարակել սոցիալիստական կուլտուրայի բարձր գաղափարական մարտական կրողներ։

«Սովետական երիտասարդ սերնդին վիճակված է ամբապնդելու սովետական սոցիալիստական հասարակարգի ուժն ու հզորությունը, սովետական հասարակության շարժիչ ուժերը լիովին օգտագործելու մեր բարեկեցության ու կուլտուրայի նոր աննախընթաց ծաղկման համար։ Այդ մեծ խնդիրների համար երիտասարդ սերնդը պետք է դաստիարակվի՝ դառնալով կայուն, առուց, խոշնդուներից շվախեցող, այդ խոշնդուներին ընդառաջ գնացող և դրանք հաղթահարելու ընդունակ։ Մեր մարդիկ պետք է լինեն կրթված, բարձր գաղափարական մարդիկ, կուլտուրական, բարյական բարձր պահանջներով և ճաշակով» (Ժդանով)։

Այդ մեծ խնդիրի իրագործման համար պետք է մարտնչի ամեն մի սովետական մանկավարժ։





Պատ. խմբագիր՝ Ար. Սարգսյան  
Տեխն. խմբագիր՝ Վ. Ելեցյան  
Մրեագրիչ՝ Կ. Պետրոսյան  
Կոնսորտ սրբագրիչ՝ Հ. Ենգիբարյան

գ.թ 05350


Պատվեր 476

Տիրաժ 800

4 տպագրական մամուլ

Հանձնվել է արտադրության 1948 թ. նոյեմբերի 15-ին  
Ստորագրված է տպագրության 1948 թ. նոյեմբերի 27-ին

Հեռակա Մանկավարժական ինստիտուտի տպարան, Երևան, Տերյան № 127




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031341

ԱՆՎՃԱՐ (254)

4407



Р. ДАВТЯН  
О РАЗБОРЕ ЛИТЕРАТУРНО-ХУДОЖЕСТВЕННЫХ  
ПРОИЗВЕДЕНИЙ  
в VIII—X классах  
(На армянском языке)  
Ереван, 1948 г.